



**USAID**  
FROM THE AMERICAN PEOPLE

**PHCR**

Primary Healthcare Reform Project

# ԲՈՒԺՆԱՏՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ԼՈՌՈՒ ԵՎ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԵՐՈՒՄ ԱՍԴ ԹԻՐԱՆԱՅԻՆ  
ԲՈՒԺՆԱՏՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԵՏԵՐԱԳՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ  
2008



Դեկտեմբեր, 2008 թ.

ՎԵՐԱՊԱՅՈՒՄ

Սույն հրապարակման մեջ արտահայտված հեղինակների կարծիքները պարտադիր չէ, որ արտացոլեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

# ԲՈՒԺՅԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՅԱՏՈՒՄ

ԹԻՐԱԽԱՅԻՆ ԲՈՒԺՅԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՏԾՐԱԳՐԱՅԻՆ  
ԳՆԱՅԱՏՈՒՄ ԼՈՌՈՒ ԵՎ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԵՐՈՒՄ

2008

## ՎԵՐԱՊԱՅՈՒՄ

Սույն հրապարակումն իրականացվել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄՁԳ) աջակցությամբ՝ Հայաստանում Առողջության առաջնային պահպանման բարեփոխումների ծրագրի կողմից: Այստեղ արտահայտված հեղինակների կարծիքները պարտադիր չէ, որ արտացոլեն ԱՄՆ ՄՁԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

## Նախաբան

Առողջության առաջնային պահպանման բարեփոխումների (ԱԱՊԲ) ծրագիրը ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) կողմից ֆինանսավորվող հնգամյա (2005-2010թթ.) ծրագիր է, որն իրականացվում է «Էներջինգ Մարկեթս Գրուփ» (ԷՄԳ) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը 2005թ. սեպտեմբերին շնորհված պայմանագրով: Ծրագրի հիմնական նպատակն է բարձրացնել առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) կայուն և բարձրորակ ծառայությունների սպառումը՝ հօգուտ հայ ընտանիքների առողջության բարելավման: Այս նպատակն իրականացվում է՝ աջակցելով ՀՀ Առողջապահության նախարարությանը (ԱՆ) ներդնել փաթեթ՝ կազմված վեց միջոցառումներից, որոնք առողջապահական բարեփոխումները կապակցում են ծառայությունների մատուցման հետ այնպես, որ մեկը մյուսին լրացնելով ստեղծեն սիներգիկ արդյունք: Նշված վեց միջոցառումները ներառում են. աջակցությունը առողջապահական բարեփոխումներին և քաղաքականությանը (որի բաղկացուցիչ մասն է բուժհաստատությունների վերանորոգումը և սարքավորումներով հագեցումը), բնակչության ազատ հավաքագրումը, ընտանեկան բժշկությունը, բուժօգնության որակի բարելավումը, առողջապահության ֆինանսավորումն ու բնակչության ուսուցումը, առողջության խթանումը և հիվանդությունների կանխարգելումը:

«Ինչպիսի՞ ներգործություն են ունենում այս միջոցառումները». սա հաճախ հնչող, սակայն հազվադեպ ֆինանսավորվող հարց է: Բարեբախտաբար, ԱԱՊԲ ծրագիրը ներդրել է մի գործընթաց, որը պատասխանում է «ներգործության» հարցին. մշակվել է վեց հարցաշարից բաղկացած փաթեթ՝ ծրագրի առաջընթացը վերահսկելու և արդյունքները գնահատելու համար: Այս հարցաշարերից երեքն ուղղված են բուժհաստատությունների գնահատմանը և նախատեսված են նախա- և հետծրագրային գնահատման մեթոդաբանության միջոցով ծրագրի ներգործության գնահատման համար առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) 164 հաստատություններում և դրանց ուղեգրման բուժհաստատություններում: Մյուս երեք հարցաշարերը նախատեսված են Հայաստանի բնակչության շրջանում տեղի ունեցող փոփոխությունների գնահատման համար՝ կիրառելով նույն նախա- և հետծրագրային գնահատման մեթոդաբանությունը:

Այս հաշվետվությունն ամփոփում է Լոռու և Շիրակի մարզերի (առաջին գոտի) առողջության առաջնային պահպանման թիրախային բուժհաստատությունների և բուժաշխատողների կատարողականի հետծրագրային գնահատումը: Վերջինս ներկայացնում է ծրագրի ներգործությունը առաջին գոտում 2006-2008թթ. ընթացքում՝ հաստատությունների և բուժաշխատողների կատարողականի ընտրված չափորոշիչների համեմատության միջոցով:

Հայաստանի ամերիկյան համալսարանի Առողջապահական ծառայությունների հետազոտման և զարգացման կենտրոնը, որը հանդիսանում է ԷՄԳ ենթակապալառուներից մեկը, ստանձնել է ԱԱՊԲ ծրագրի մոնիտորինգի և գնահատման հիմնական պատասխանատվությունը: Սույն ուսումնասիրության հեղինակներն են Ծովինար Հարությունյանը, Անահիտ Դեմիրճյանը, Վարդուհի Պետրոսյանը և Մայքլ Թոմփսոնը: Հարկ ենք համարում շնորհակալություն հայտնել նաև Հռիփսիմե Մարտիրոսյանին և Նունե Տուզյանին՝ ուսումնասիրության բոլոր փուլերում իրենց արժեքավոր մասնակցության համար, ինչպես նաև՝ մեր հարցազրուցավարներին (թիրախային մարզերի առողջության առաջնային պահպանման բժիշկներին)՝ տվյալների հավաքագրման գործում իրենց ցուցաբերած ջանքերի համար:

Վստահ ենք, որ այս ուսումնասիրության արդյունքներն արժեքավոր կլինեն ինչպես առավել տեղեկացված որոշումների կայացման միջոցով առողջապահական արդյունքների բարելավման, այնպես էլ՝ նոր ծրագրերի մշակման համար: Սույն հաշվետվությունն առկա է ԱԱՊԲ ծրագրի կայքում՝ [www.phcr.am](http://www.phcr.am): Դրա վերաբերյալ մեկնաբանությունները և հարցերը կարող եք ուղարկել [info@phcr.am](mailto:info@phcr.am) ինտերնետային հասցեով:

Ռիչարդ Ա. Յոդեր  
Ծրագրի ղեկավար, ԱԱՊԲ ծրագիր

# Բովանդակություն

Հապավումների ցանկ.....	iv
1. Ներածություն.....	1
2. Մեթոդներ.....	4
3. Արդյունքներ.....	8
3.1 Բուժօգնության մատչելիություն/տրամադրում.....	8
3.2 Բուժաշխատողի փոխհարաբերությունները այցելուների և բնակչության հետ.....	11
3.3 Միջավայր.....	14
3.4 Բուժհաստատության կառավարում.....	18
3.5 Առաջնային և երկրորդային կանխարգելում.....	22
3.6 Կատարողականի ընդհանուր միջին միավոր.....	26
3.7 ԱԱՊ համակարգի բուժաշխատողների մասնագիտական կարողությունները.....	27
3.7.1. Համայնքային բուժքույրեր.....	27
3.7.2. Ամբուլատորիաների, առողջության կենտրոնների և պոլիկլինիկաների բժիշկներ.....	33
3.8 Հիմնական արդյունքներ.....	37
Հավելված 1. Բուժհաստատության և բուժաշխատողների կատարողականի գնահատման հարցաթերթիկ.....	39
Հավելված 2. Կատարողականի միջին գնահատականն ըստ բուժհաստատությունների.....	53

## Հապավումների ցանկ

ԱԱՊ	Առողջության առաջնային պահպանում
ԱԱՊԲ	Առողջության առաջնային պահպանման բարեփոխումներ
ԱԾՀԿ	Առողջապահական ծառայությունների հետազոտման և զարգացման կենտրոն
ԱԿ	Առողջության կենտրոն
ԱՄՆ ՄԶԳ	ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն
ԱՆ	Առողջապահության նախարարություն
ԲԱ	Բժշկական ամբուլատորիա
ԲՄԿ	Բուժակ – մանկաբարձական կետ
ԳԲԱ	Գյուղական բժշկական ամբուլատորիա
ԳՄՎ	Գիտելիքներ, մոտեցումներ և վարվելակերպ
ԷՄԳ	Էմերջինգ մարքեթս գրուփ (անգլերեն անվանումից)
ԸԲք	Ընտանեկան բուժքույր
ԿՄՊ	Կատարողականի մոնիտորինգի պլան
ՀԱԿ	Համայնքային առողջապահական կոմիտե
ՀԱՀ	Հայաստանի ամերիկյան համալսարան
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՍԲԾ	Հայաստանի սոցիալական բարեփոխումների ծրագիր
ՁԻԱՀ	Ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ
ՄԳ	Մոնիտորինգ և գնահատում
ՄԻԱՎ	Մարդու իմունային անբավարարության վիրուս
ՄՀԻՎ	Մանկական հիվանդությունների ինտեգրված վարում
ՆՕՎԱ	Նորարարություն և օժանդակություն վերարտադրողական առողջությանը
ՊԿ	Պոլիկլինիկա
ՍԻՀ	Սրտի իշեմիկ հիվանդություն

# 1. Ներածություն

## 1.1 ԱԱՊԲ ծրագրի մասին

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը (ԱՄՆ ՄԶԳ) հնգամյա պայմանագիր է կնքել «Էներջինգ Սարքեսս Գրուփ» (ԷՍԳ) միջազգային խորհրդատվական ընկերության հետ՝ Հայաստանում Առողջության առաջնային պահպանման բարեփոխումների ծրագիրն իրականացնելու նպատակով: Ծրագրի հիմնական նպատակն է բարելավել որակյալ առաջնային բուժօգնության մատչելիությունը բնակչության համար՝ մի կողմից առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) օղակի բուժհաստատությունները և ընտանեկան բժիշկների/բուժքույրերի կարողությունները զորացնելու, մյուս կողմից՝ առողջական խնդիրների վերաբերյալ հանրության իրազեկվածությունը բարձրացնելու, բնակչության շրջանում բուժօգնության դիմելու մշակույթը զարգացնելու և ԱԱՊ ծառայությունների նկատմամբ պահանջարկը բարձրացնելու միջոցով: ԱԱՊԲ ծրագրի վեց հիմնական բաղադրիչներն իրականացվում են «ԻնտրաՅելթ Ինթերնեյշնլ» կազմակերպության, Հայաստանի ամերիկյան համալսարանի, «Օվերսիզ Ստրաթիջիք Քոնսալթինգ» ընկերության և «Սոշլ Սեկտորզ Դիվելօպմենթ Ստրաթիջիք» կազմակերպության հետ սերտ համագործակցության շրջանակներում՝ ներառելով հետևյալը.

- **Բարեփոխումների ընդլայնում.** օժանդակություն կառավարությանը՝ հետագա բարեփոխումների համար բարենպաստ իրավական դաշտ ստեղծելու հարցում, հանրապետության տարածքում գործող ԱԱՊ բուժհաստատությունների վերանորոգում և վերահագեցում, դրանց ղեկավարների համար կրթական դասընթացների մշակում և կազմակերպում:
- **Ընտանեկան բժշկություն.** ժամանակակից կրթական ծրագրերի և նյութերի մշակում շարունակական բժշկական կրթության համար, ընտանեկան բժշկության անկախ խմբային պրակտիկաների հիմնում, ընտանեկան բժիշկների և բուժքույրերի ուսուցում:
- **Ազատ հավաքագրում.** ազատ հավաքագրման սկզբունքի ներդրում Հայաստանի առողջապահության համակարգում՝ բուժաշխատողների մրցակցության միջոցով սպասարկվողին ուղղված ծառայությունների զարգացմանը նպաստելու համար:
- **Բուժօգնության որակ.** բուժօգնության որակի բարձրացում որակի ժամանակակից ստանդարտների և որակի ապահովման գործընթացների ներդրման միջոցով, բուժաշխատողների լիցենզավորման և հավատարմագրման կանոնակարգերի ներդրում:
- **Առողջապահության ֆինանսավորում.** առողջապահությանը հատկացվող միջոցների բաշխման թափանցիկության և արդյունավետության բարձրացում ծառայությունների ինքնարժեքի հաշվարկի բարելավման և կատարողականի վրա հիմնված վարձատրության մեխանիզմների միջոցով, բուժհաստատությունների մակարդակում հաշվետվության գործընթացի բարելավում, Առողջապահության ազգային հաշիվների կիրառման սահմանում:
- **Բնակչության ուսուցում.** տրամադրվող ԱԱՊ ծառայությունների վերաբերյալ բնակչության տեղեկացվածության բարձրացում, հասարակության կողմից բժշկի ազատ ընտրության գործընթացի ըմբռնման և ընտանեկան

բժշկության գաղափարի ընկալման ապահովում, առողջ ապրելակերպի քարոզչություն և բուժօգնության դիմելու նշակույթի զարգացում:

Ծրագիրն իրականացվում է շրջանային ընդլայնման սկզբունքով, որը թույլ է տալիս ապահովել բարեփոխումների աստիճանական ընդլայնումը ծրագրի գործունեության ընթացքում: Ծրագրի առաջնահերթ խնդիրներն են յուրաքանչյուր շրջանում ընտրված բուժհաստատությունների ֆիզիկական պայմանների և բուժօժանայությունների տրամադրման բարելավումը: Ծրագիրը համագործակցում է Հայաստանի տարբեր մարզերի մոտ երեք հարյուր բուժհաստատությունների հետ: Ծրագրի գործունեության առաջին երկու տարում (2006-2008թթ.) աշխատանքները կենտրոնացած են եղել Լոռու և Շիրակի մարզերում:

Թիրախային բուժհաստատություններում ծրագիրը բազմակողմանի միջոցառումներ է իրականացրել, այդ թվում՝ վերանորոգում, կահավորում և սարքավորումների տրամադրում, ինչպես նաև բուժաշխատողների և վարչական անձնակազմի վերապատրաստում ընտանեկան բժշկության և բուժքույրության, բուժօգնության որակի, կառավարման, ֆինանսավորման/հաշվետվության վերաբերյալ, ինչպես նաև՝ հաշվապահական համակարգչային ծրագրերի, ազատ հավաքագրման և ըստ կատարողականի վարձատրության համակարգերի ներդրում և այլն: Ծրագրի թիրախ են հանդիսացել նաև ընտրված բուժհաստատությունների կողմից սպասարկվող համայնքները, հատկապես՝ ԱԱՊԲ ծրագրի բնակչության ուսուցման բաղադրիչի առումով, ինչը ենթադրում է այդ համայնքներում առողջապահական կոմիտեների հիմնում և օժանդակություն դրանց աշխատանքներին, փոքր դրամաշնորհների հատկացում և այլն: Սակայն ընտրված ոչ բոլոր բուժհաստատություններում է, որ թվարկված միջոցառումներն իրականացվում են ողջ ծավալով. տարբեր բուժհաստատություններում ներդրվող միջոցառումների համալիրը կարող է տարբեր լինել՝ կախված առկա պահանջներից և առաջնահերթություններից:

## 1.2 ԱԱՊԲ ծրագրի մոնիտորինգի և գնահատման պլան

Ծրագրի մոնիտորինգի և գնահատման նպատակով իրականացվում են հետևյալ միջոցառումները.

1) Ելակետային գնահատում, այդ թվում.

- Յուրաքանչյուր մարզի թիրախային հաստատությունների նախածրագրային գնահատումներ, որոնք ներառում են. 1) հարցազրուցավարի միջոցով կատարվող բուժհաստատության գնահատում, որն անդրադառնում է ծրագրի բոլոր բաղադրիչների կառուցվածքային չափորոշիչներին (դրանցից մի քանիսը ծրագրի կատարողականի մոնիտորինգի պլանի չափորոշիչներ են), 2) բուժհաստատության կատարողականի գնահատում, որն անդրադառնում է հաստատության և բուժաշխատողների գործունեությանը և կարող է հիմք հանդիսանալ բուժօգնության որակի գնահատման համար:
- Բնակչության հարցումներ, որոնք ներառում են. 1) սպասարկվողների բավարարվածության հարցումներ, 2) սպասարկվողների գիտելիքների, մոտեցումների և վարվելակերպի (ԳՄՎ) հարցումներ ԱԱՊԲ ծրագրի կողմից հիմնված Համայնքային առողջապահական կոմիտեների (ՀԱԿ) միջոցով տարածվող առողջապահական թեմաներով, 3) հանրապետության ողջ

տարածքում իրականացվող ընտանիքների առողջապահական հարցումներ, որոնք վերաբերվում են հարցվողների կողմից սեփական առողջական վիճակի գնահատմանը, առողջության ցուցանիշների դինամիկ փոփոխություններին, վաղ ախտորոշիչ և կանխարգելիչ ծառայություններից օգտվելու գործելակերպին, բուժօգնության հասանելիությանը, հարցվողների կողմից այդ օգնության որակի ընկալմանը, ԱԱՊԲ ծրագրի կողմից իրականացվող միջոցառումներին մասնակցությանը և դրանց նկատմամբ ունեցած մոտեցումներին:

2) Միջանկյալ և վերջնական գնահատումներ, այդ թվում.

- Յուրաքանչյուր մարզի թիրախային բուժհաստատություններում ծրագրի աշխատանքների ավարտին կրկնակի անգամ կատարվում են վերոհիշյալ բոլոր գնահատումները:
- Թիրախային մարզերում ծրագրի միջոցառումների ավարտից հետո անցկացվող բնակչության կրկնակի հարցումներ (սպասարկվողների բավարարվածության և ԳՄՎ հարցումներ), նաև՝ հանրապետության ողջ տարածքում իրականացվող ընտանիքների առողջապահական հարցումներ, որոնք ընդգրկում են ելակետային գնահատման մեջ ընդգրկված բոլոր տարածքները:

Սույն հաշվետվությունն ամփոփում է ԱԱՊԲ ծրագրի կողմից Լոռու և Շիրակի մարզերում ընտրված բուժհաստատությունների և բուժաշխատողների կատարողականի հետծրագրային գնահատման արդյունքները: Այս հետազոտությունը գնահատում է ծրագրի ազդեցությունը 1-ին գոտու ԱԱՊ թիրախային բուժհաստատություններում:



## 2. Մեթոդներ

Լոռու և Շիրակի (1-ին գոտու) թիրախային բուժհաստատություններն ընտրվել են ԱԱՊԲ ծրագրի և համապատասխան մարզային առողջապահական վարչությունների կողմից համատեղ: Այդ բուժհաստատություններում և նրանց կողմից սպասարկվող համայնքներում 2006-2008թթ. իրականացվել են ԱԱՊԲ ծրագրի հետևյալ միջոցառումները.

- 1) ԱԱՊ բուժհաստատության վերանորոգում,
- 2) ԱԱՊ բուժհաստատությանը հիմնական անհրաժեշտության կահույքի, բժշկական սարքավորումների և պարագաների տրամադրում,
- 3) գյուղական բուժքույրերի վերապատրաստում ընտանեկան և համայնքային բուժքույրության թեմաներով,
- 4) համայնքային առողջապահական կոմիտեների (ՀԱԿ) հիմնում գյուղական համայնքներում՝ հիվանդությունների կանխարգելման և առողջության պահպանման վերաբերյալ համայնքի անդամներին կրթելու նպատակով,
- 5) առողջապահական կրթական նյութերի, այդ թվում՝ հեռուստատեսային և ռադիո գովազդի, պաստառների և թերթիկների տրամադրում բնակչությանը՝ ԱԱՊ բարեփոխումների, ԱԱՊ ծառայությունների և որոշ առողջապահական խնդիրների վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով,
- 6) ուղեգրման բուժհաստատությունների ղեկավարների վերապատրաստում ԱԱՊ բարեփոխումների, ռազմավարական պլանավորման, ֆինանսական և մարդկային ռեսուրսների կառավարման, աշխատանքային օրենսդրության և բուժօժանայությունների որակի թեմաներով,
- 7) բուժհաստատությունների գլխավոր հաշվապահների և հաշվապահների վերապատրաստում հաշվապահության ստանդարտների, ինքնարժեքի հաշվարկման, հարկային օրենսդրության, ինչպես նաև՝ համակարգչային հաշվապահական ծրագրերի կիրառության թեմաներով:

Բացի այդ, 2006-2008թթ. ԱԱՊԲ ծրագիրը իրականացրել է մի շարք միջոցառումներ ողջ հանրապետության տարածքում: Այս միջոցառումները նպատակ են հետապնդել ներդնել ազատ հավաքագրման սկզբունքի վրա հիմնված ԱԱՊ մոդելը և բարելավել ԱԱՊ բուժհաստատությունների ֆինանսավորումը կատարողականի վրա հիմնված վարձատրության և հավաքագրման վրա հիմնված ֆինանսավորման համակարգերի ներդրման միջոցով: Միջոցառումները ներառել են նաև համակարգիչների և համակարգչային ծրագրերի տրամադրում բուժակ-մանկաբարձական կետերից (ԲՄԿ) բարձր կարգավիճակ ունեցող բոլոր ԱԱՊ բուժհաստատություններին (գյուղական բժշկական ամբուլատորիաներ (ԳԲԱ), առողջության կենտրոններ (ԱԿ) և պոլիկլինիկաներ (ՊԿ), որոնց այսուհետև կանվանենք մեկ ընդհանրական եզրով՝ ուղեգրման հաստատություններ), ինչպես նաև՝ տրամադրված համակարգչային ծրագրերի գործարկման ուղղությամբ համապատասխան մասնագետների (օր.՝ համակարգչային օպերատորների և հաշվապահների) վերապատրաստում:

ԱԱՊԲ ծրագրի մոնիտորինգի և գնահատման (ՄԳ) թիմը երկու տեսակի գնահատում է իրականացրել ընտրված բուժհաստատություններում՝ դրանց կարողությունների (նյութական և մարդկային) և կատարողականի (հաստատության և բուժաշխատողների):

## **Բուժհաստատության կատարողականի գնահատման հարցաշարը**

Բուժհաստատության կատարողականի գնահատման հարցաշարը մշակվել է ԱԱԴ բուժհաստատություններում որակի բարելավման ռազմավարության շրջանակներում ՆՕՎԱ ծրագրի կողմից կիրառված բուժհաստատությունների ինքնագնահատման հարցաշարի, ինչպես նաև՝ Հայաստանի սոցիալական բարեփոխումների ծրագրի (ՀՄԲԾ) կողմից փորձարարական վայրերում նախկինում կիրառված բուժհաստատությունների կազմակերպման/կառավարման ինքնագնահատման հարցաշարի հիման վրա՝ ՄԳ թիմի կողմից համապատասխան փոփոխություններ կատարելուց և նշված հարցաշարերը ԱԱԴԲ ծրագրի կարիքներին հարմարեցնելուց հետո: Առաջին գոտում կիրառվելուց հետո հարցաշարը կրկին փոփոխվել է՝ ելակետային հարցման ժամանակ հայտնաբերված մի շարք հնարավոր խնդիրներից (սխալ/ուռճեցված տվյալների տրամադրում) խուսափելու համար: Բուժհաստատության տնօրենը կամ պատասխանատուն շարունակել է հանդես գալ որպես հիմնական հարցվող, սակայն այս անգամ հարցաշարը լրացրել է ոչ թե ինքը, այլ՝ հարցազրուցավարը: ՄԳ թիմը փոփոխել է հարցաշարերը ԱՄՆ ՄՁԳ/ԱԱԴԲ ծրագրի խորհրդատուների՝ 2008թ. իրականացրած արտաքին գնահատման հանձնարարականների, ԱԱԴԲ ծրագրի նպատակների և ԱՄՆ ՄՁԳ ֆինանսավորման աղբյուրների փոփոխությունների հիման վրա:

Ինչևէ, հարցաշարի բովանդակության և լրացման եղանակի այս էական փոփոխությունները սահմանափակել են ելակետային և հետծրագրային տվյալների ուղղակի համեմատության հնարավորությունը: Այս սահմանափակումը շտկելու համար ՄԳ թիմը հետծրագրային գնահատման հարցաշարի մեջ (հավելված 1) ընդգրկել է նաև հետհայաց հարցեր (հետծրագրային գնահատման ժամանակ հարցերը տրվել են ոչ միայն 2008թ., այլև՝ 2006թ. համար): Այս փոփոխությունը նպատակ ուներ համեմատելի դարձնել ելակետային և հետծրագրային գնահատման արդյունքները: Համոզվելու համար, որ 2006թ. վերաբերյալ հարցերին 2008թ. պատասխանելը չի հանգեցնի ոչ հավաստի տվյալների՝ ՄԳ թիմը Լոռու և Շիրակի մարզերում հետածրագրային գնահատման ժամանակ ստացված հետհայաց (ելակետային) տվյալները համեմատել է 2007թ. 2-րդ գոտու թիրախային մարզերում՝ Կոտայքում, Տավուշում և Գեղարքունիքում անցկացված ելակետային գնահատման տվյալների հետ: Համեմատությունը ցույց է տվել, որ հիմնական ելակետային ցուցանիշները երկու գոտիներում նման են: Օրինակ՝ 1-ին գոտու հետհայաց ելակետային տվյալների հիման վրա հաշվարկված կատարողականի ընդհանուր ցուցանիշը եղել է 1.4, իսկ 2-րդ գոտու ելակետային ցուցանիշը՝ 1.3: Այս արդյունքները վկայում են, որ 2006թ. վերաբերյալ 2008թ. ստացված պատասխանները հավաստի են, որը վստահություն է ներշնչում առաջին գոտու նախա-հետծրագրային համեմատության հանդեպ:

## **Բուժաշխատողի գնահատման հարցաշարը**

ՄԳ թիմը ԱԱԴԲ ծրագրի Ընտանեկան բժշկության թիմի հետ համատեղ մշակել է նաև բուժաշխատողների կլինիկական հմտությունները/կատարողականը գնահատող հարցաշար: Այս հավելյալ հարցաշարերը լրացվել են բուժհաստատության գնահատման ժամանակ. բուժաշխատողները հանդես են եկել որպես հարցվողներ: Բուժաշխատողների գնահատման հարցաթերթիկը ներառել է նաև երկու դիտարկման ստուգաթերթիկներ, որոնք գնահատել են բուժքույրերի կատարողականը՝ ըստ հանձնարարվող ընթացակարգի արյան զարկերակային ճնշումը և արյան մեջ գլյուկոզայի մակարդակը չափելիս:

Այսպիսով, բուժհաստատության և բուժաշխատողների կատարողականի գնահատման հարցաթերթիկը կազմված է հետևյալ հիմնական բաժիններից.

- Մատչելիություն/բուժօգնության ցուցաբերում
- Բուժաշխատողների փոխհարաբերությունները սպասարկվողների և բնակչության հետ
- Միջավայր
- Կառավարում
- Առաջնային և երկրորդային կանխարգելում
- Բուժաշխատողների հմտություններ/կատարողական

**Ընտրանք**

2008թ. մայիսին գնահատվել են առաջին գոտու բոլոր 61 թիրախային ԱԱՊ բուժհաստատությունները (30-ը՝ Լոռու մարզում, 31-ը՝ Շիրակի): Երեք հաստատություն, որոնք ընդգրկված են եղել ելակետային գնահատման մեջ, չեն ներառվել հետծրագրային գնահատման մեջ. ծրագրի թիրախային հաստատությունների ցանկից հանվել են երկու ԲՄԿ (Շիրակի և Ջրափիի) և մեկ պոլիկլինիկա (Ստեփանավանի): Վերջինս այլևս չէր հանդիսանում ուղեգրման հաստատություն թիրախային ԲՄԿ-ի (Ուրասարի) համար: Այդուհանդերձ 1-ը ներկայացնում է այս գնահատման մեջ ընդգրկված Լոռու և Շիրակի մարզերի թիրախային և ուղեգրման բուժհաստատությունների ցանկը:

**Այդուհանդերձ 1. ԱԱՊԲ ծրագրի թիրախային բուժհաստատություններն 1-ին գոտում**

Վերանորոգված ԲՄԿ-ներ Շիրակի մարզում	Վերանորոգված ԲՄԿ-ների ուղեգրման հաստատություններ Շիրակի մարզում	Վերանորոգված ԲՄԿ-ներ Լոռու մարզում	Վերանորոգված ԲՄԿ-ների ուղեգրման բուժհաստատություններ Լոռու մարզում
1. Անուշավան	22. Փանիկի ԱԿ	1. Շամուտ	22. Դսեղի ԱԿ
2. Մեղրաշեն <sup>†</sup>	23. Ջաջուռի ամբ.	2. Լորուտ	23. Վահագնի ԱԿ
3. Կամո	24. Մարմաշենի ամբ.	3. Չորագյուղ <sup>†</sup>	24. Մարգահովիտ ԱԿ
4. Կապս <sup>†</sup>	25. Հոռոմի ամբ.	4. Ֆիլիտովո	5. Լերմոնտովո <sup>†</sup>
5. Վարդաքար <sup>†</sup>	26. Ախուրյանի պոլ.	6. Դուրսալ	6. Սպիտակի պոլ.*
6. Լուսակերտ <sup>†</sup>	27. Մայիսյանի ամբ.	7. Լեռնանցք	7. Սալմաստի պոլ.
7. Հովիտ <sup>†</sup>	28. Ախուրիկի ամբ.	8. Հաղպատ <sup>†</sup>	8. Սեփրուկի պոլ.
8. Այգաբաց <sup>†</sup>	29. Անիպենգայի ԱԿ	9. Ջիլիգա	9. Սեփրուկի պոլ.
9. Կառնուտ <sup>†</sup>	30. Աղինի ԱԿ	10. Խնկոյան <sup>†</sup>	10. Սեփրուկի պոլ.
10. Հովունի <sup>†</sup>	31. Ամասիայի ԱԿ	11. Լուսաղբյուր <sup>†</sup>	11. Սեփրուկի պոլ.
11. Առափի <sup>†</sup>		12. Սարահարթ <sup>†</sup>	12. Սեփրուկի պոլ.
12. Բայանդուր		13. Լեռնահովիտ	13. Սեփրուկի պոլ.
13. Ոսկեհասկ <sup>†</sup>		14. Մեղովկա	14. Սեփրուկի պոլ.
14. Բագրավան <sup>†</sup>		15. Նովոսելցեվո	15. Սեփրուկի պոլ.
15. Իսահակյան		16. Սարամեջ <sup>†</sup>	16. Սեփրուկի պոլ.
16. Շիրակավան		17. Թեղուտ <sup>†</sup>	17. Սեփրուկի պոլ.
17. Լուսաղբյուր		18. Ուրասար	18. Սեփրուկի պոլ.
18. Գառնառիճ <sup>†</sup>			19. Սպիտակի պոլիկլինիկա
19. Արեգնաղեմ <sup>†</sup>			20. Թումանյանի ամբ.
20. Գտաշեն			21. Լեռնապատի ամբ.
21. Բանդիվան			

<sup>†</sup> Հիմնվել է համայնքային առողջապահական կոմիտե:

**Վերանորոգման ենթակա ԳԲԱ/ՊԿ Լոռուում**  
 19. Սպիտակի պոլիկլինիկա  
 20. Թումանյանի ամբ.  
 21. Լեռնապատի ամբ.

\* Նաև վերանորոգման համար է ընտրված:

## **Նյութատեխնիկական ապահովում**

Երկօրյա կրթական դասընթացի ընթացքում ՄԳ թիմը սովորեցրել է հարցազրուցավարներից իրականացնել հարցումը՝ խստորեն հետևելով հետազոտության ուղեցույցին, նաև՝ փոխանցել է նրանց արյան զարկերակային ճնշման և արյան մեջ գլյուկոզայի մակարդակի չափման անհրաժեշտ հմտություններ: Պատրաստվել են երեք հարցազրուցավար Լոռու մարզում և երեքը՝ Շիրակի (բոլորը՝ տեղի բժիշկներ, որոնցից հինգը մասնակցել են նաև ելակետային գնահատմանը): Յուրաքանչյուր մարզում տեղացի վարորդներ են վարձվել՝ հարցազրուցավարներին համապատասխան հաստատություններ տանելու համար: Հարցումները տևել են մոտավորապես հինգ շաբաթ (սկսել են 2008թ. ապրիլի 29-ին և ավարտվել մայիսի վերջին շաբաթում): ՄԳ թիմը պարբերաբար իրականացրել է հարցման գործընթացի ընտրողական ստուգումներ, որպեսզի ապահովի գործընթացի համապատասխանությունը հետազոտության ընթացակարգին:

## **Վերլուծություն**

ՀԱՀ Առողջապահական ծառայությունների հետազոտման և զարգացման կենտրոնի (ԱԾՀԿ) մուտքագրող թիմը մուտքագրել է տվյալները համակարգչային տվյալների բազա՝ օգտագործելով SPSS 11.0 համակարգչային ծրագիրը: ՄԳ թիմն իրականացրել է նկարագրողական և վարկածի ստուգման վրա հիմնված համեմատական վերլուծություն և բուժհաստատությունների տվյալներն ամփոփել է աղյուսակների ձևով՝ դրանցից օգտվելը հեշտացնելու նպատակով:

Բուժհաստատության/բուժաշխատողի կատարողականի գնահատման հարցաշարի յուրաքանչյուր բաժնի համար ՄԳ թիմը հաշվարկել է գումարային միավորներ, որոնք ներառում են տվյալ բաժնի բոլոր հարցերը: Առավելագույն՝ 3, միավոր տրվել է «այո» պատասխանին, իսկ նվազագույն՝ 0, միավոր «ոչ»-ին: Պատասխանների բազմաստիճան սանդղակի դեպքում յուրաքանչյուր հարց նույնպես ստացել է 0-3 միավոր, սակայն եղել են նաև միջանկյալ միավորներ՝ 1, 1.5 և 2: Գումարային միավորի հիման վրա հաշվարկվել է միջին միավոր յուրաքանչյուր բաժնի համար՝ 3.0 առավելագույն սահմանով: Միջին միավորները հաշվարկվել և համեմատվել են զուգակցված ընտրանքների t-թեստի (նախա- և հետծրագրային համեմատություններ) և անկախ ընտրանքների t-թեստի (համեմատություններ ըստ տարբեր բուժհաստատությունների) միջոցով:

### 3. Արդյունքներ

Գնահատված 61 բուժհաստատությունից 42-ը վերանորոգվել են, իսկ 19-ը եղել են դրանց ուղեգրման հաստատությունները: Բուժհաստատություններից 39-ը եղել են ԲՄԿ (63.9%), 8-ը՝ ԳԲԱ (13.1%), 11-ը՝ ԱԿ (18.0%) և 3-ը՝ ՊԿ (4.9%): Բուժհաստատությունների ղեկավարները և բուժաշխատողները պատասխանել են բուժօգնությանը և դրա մատչելիությանը վերաբերվող մի շարք հարցերի:

#### 3.1 Բուժօգնության մատչելիություն/տրամադրում

Ինչպես ներկայացված է աղյուսակ 2-ում, բուժօգնության մատչելիությունն էապես աճել է բոլոր կողմերով: 2008թ. բուժհաստատությունների գրեթե 64.0%-ը միշտ բաց և մատչելի է եղել այցելուների համար պաշտոնապես սահմանված ժամերին՝ 2006թ. 49.2%-ի համեմատությամբ: Էական դրական փոփոխություն է նկատվել ԲՄԿ-ներում (2006թ.՝ 9 ԲՄԿ, 2008թ.՝ 18): 2008թ. բնակչությունն ավելի տեղյակ է եղել ԱԱՊ օղակում մատուցվող անվճար ծառայությունների (ԱԾՓ) մասին (2008թ. հարցվողների 100%-ը նշել է, որ ամբողջ բնակչությունը կամ նրա մեծամասնությունը գիտի անվճար ծառայությունների մասին, իսկ 2006թ.՝ 77%-ը): 2006թ. համեմատությամբ, ավելի շատ բուժհաստատություններում (ԲՄԿ-ներում և ԱԿ-ներում) են փակցված եղել աշխատանքային ժամերը (գրանցվել է 35.3% աճ՝ ԲՄԿ-ների և 28.6%՝ ԱԿ-ների համար): 2008թ. աշխատանքային ժամերն ավելի հարմար են եղել ութ ԲՄԿ-ի և մեկ ԱԿ-ի այցելուների համար: 2008թ. հաստատությունների 90.2%-ում եղել են կրթական նյութեր, իսկ 2006թ.՝ 53.3%-ում: ԱՆ պետպատվերի տեղեկատու ցուցանակները տեսանելի են եղել 53 բուժհաստատությունների այցելուների համար (2006թ. այդ թիվը կազմել է 35): Բուժաշխատողներն ավելի շատ նախա-հետծննդյան տնային այցեր են կատարել (96.7%՝ 2008թ., 88.5%՝ 2006թ.): Արտակարգ իրավիճակներին արձագանքման ցուցումները 2006թ. հետո փակցվել են ևս չորս բուժհաստատությունում: Ինչևէ, 2008թ. դրանք առկա են եղել 61 բուժհաստատությունից միայն 15-ում:

#### **Բուժօգնության մատչելիության/տրամադրման ԲՄԿ-ներին քննող հարցեր**

ԲՄԿ-ների 94.9%-ին վերահսկող բժիշկն այցելել է առնվազն ամիսը մեկ անգամ (59.0%-ին՝ 2006թ.): 2008թ. ԲՄԿ-ների 66.7%-ում վերահսկող բժիշկը տնային այցեր է կատարել առնվազն ամիսը մեկ անգամ (52.9%-ի աճ 2006թ. համեմատ), 17.9%-ում՝ 2 ամիսը մեկ անգամ, 7.7%-ում՝ 3 ամիսը մեկ անգամ, իսկ 7.7%-ում՝ 3 ամիսը մեկ անգամից հազվադեպ: 2008թ. ԲՄԿ-ների 82.1%-ում բժիշկը միշտ ժամանակ է տրամադրել հիվանդներ ընդունելու համար, իսկ 17.9%-ում՝ սովորաբար: 2006թ. վերահսկող բժիշկը նախազգուշացրել է իր այցի ժամի մասին 35 ԲՄԿ-ի, իսկ 2008թ.՝ 39-ի: 2008թ. ևս շատ ԲՄԿ-ներում գյուղապետը հազվադեպ է փոխադրամիջոց տրամադրել հիվանդներին անհետաձգելի դեպքերում (աղյուսակ 3): Աղյուսակ 4-ում ներկայացված է մատչելիության ցուցանիշների բաշխումն ըստ բուժհաստատությունների տեսակի և աշխարհագրական տեղակայման: Ե՛վ 2006թ., և՛ 2008թ. պոլիկլինիկաների միավորներն ավելի բարձր են, քան մնացածներինը: ԲՄԿ-ներն ունեն ամենացածր միավորները: Ե՛վ 2006թ., և՛ 2008թ. Լոռու բուժհաստատությունները հավաքել են ավելի ցածր միավորներ, քան Շիրակի: Միջին միավորը բոլոր հաստատությունների համար եղել է 2.0 (3.0 առավելագույն հնարավորից) 2006թ. և 2.5՝ 2008թ., որը վիճակագորեն հավաստի տարբերություն է: Նկատված բարելավումները եղել են համատարած՝ անկախ բուժհաստատությունների տեսակից կամ տեղակայումից:

**Աղյուսակ 2. Բուժօժանայությունների մատչելիությունը/բուժօգնության ցուցաբերումը ըստ բուժհաստատության տեսակի**

	ԲՄԿ		Ուղեգրման հաստատություններ								ԸՆԴԱՄԵՆԸ	
	2006	2008	Ամբուլատորիա		Առողջ. կենտրոն		Պոլիկլինիկա		Ընդամենը		2006	2008
			2006	2008	2006	2008	2006	2008	2006	2008		
<b>Հաստատությունը բաց է և մատչելի պաշտոնապես սահմանված ժամերին</b>												
Միշտ	23.1 (9)	46.2(18)	87.5 (7)	87.5 (7)	100.0(11)	100.0(11)	100.0(3)	100.0(3)	95.5(21)	95.5(21)	49.2(30)	63.9(39)
Սովորաբար	33.3(13)	53.8(21)	-	12.5 (1)	-	-	-	-	-	4.5 (1)	21.3(13)	36.1(22)
Երբեմն	41.0(16)	-	12.5 (1)	-	-	-	-	-	4.5 (1)	-	27.9(17)	-
Երբեք	2.6 (1)	-	-	-	-	-	-	-	-	-	1.6 (1)	-
<b>Բնակչությունը տեղյակ է մատուցվող անվճար ծառայությունների մասին</b>												
Այո, բոլորը	30.8(12)	56.4(22)	25.0 (2)	75.0 (6)	9.1 (1)	81.8 (9)	33.3 (1)	66.7 (2)	18.2 (4)	77.3(17)	26.2(16)	63.9(39)
Այո, մեծ մասը	38.5(15)	43.6(17)	62.5 (5)	25.0 (2)	90.9(10)	18.2 (2)	33.3 (1)	33.3 (1)	72.7(16)	22.7 (5)	50.8 (31)	36.1(22)
Մի քանիսը	28.2(11)	-	12.5 (1)	-	-	-	33.3 (1)	-	9.1 (2)	-	21.3(13)	-
Ոչ	2.6 (1)	-	-	-	-	-	-	-	-	-	1.6 (1)	-
<b>Աշխատանքային ժամերը փակցված են բուժհաստատությունում</b>												
Այո	43.6(17)	59.0(23)	87.5 (7)	87.5 (7)	63.6 (7)	81.8 (9)	100.0(3)	100.0(3)	77.3(17)	86.4(19)	55.7(34)	68.9(42)
Ոչ	56.4(22)	41.0(16)	12.5 (1)	12.5 (1)	36.4 (4)	18.2 (2)	-	-	22.7 (5)	13.6 (3)	44.3 (27)	31.1 (19)
<b>Աշխատանքային ժամերը հարմար են այցելուների համար</b>												
Այո	74.4(29)	94.9 (37)	75.0 (6)	75.0 (6)	90.9 (10)	100.0(11)	100.0(3)	100.0 (3)	86.4 (19)	90.9 (20)	78.7 (48)	93.4 (57)
Ոչ	25.6 (10)	5.1 (2)	25.0 (2)	25.0 (2)	9.1 (1)	-	-	-	13.6 (3)	9.1 (2)	21.3 (13)	6.6 (4)
<b>Հաստատությունում կան անվճար ծառայությունները պարզաբանող նյութեր</b>												
Այո	42.1 (16)	84.6 (33)	75.0 (6)	100.0 (8)	72.7 (8)	100.0(11)	66.7 (2)	100.0 (3)	72.7 (16)	100.0(22)	53.3 (32)	90.2 (55)
Ոչ	57.9 (22)	15.4 (6)	25.0 (2)	-	7.3 (3)	-	33.3 (1)	-	27.3 (6)	-	46.7 (28)	9.8 (6)
<b>Ան պետպատվերի տեղեկատու ցուցանակները տեսանելի են այցելուներին</b>												
Այո	44.7 (17)	81.6 (31)	75.0 (6)	100.0 (8)	81.8 (9)	100.0(11)	100.0(3)	100.0 (3)	81.8 (18)	100.0(22)	58.3 (35)	88.3 (53)
Ոչ	55.3 (21)	18.4 (7)	25.0 (2)	-	18.2 (2)	-	-	-	18.2 (4)	-	41.7 (25)	11.7 (7)
<b>Բուժաշխատողները սովորաբար կատարում են հետծննդյան տնային այցեր</b>												
Այո	89.7 (35)	97.4 (38)	87.5 (7)	100.0 (8)	90.9 (10)	100.0(11)	66.7 (2)	66.7 (2)	86.4 (19)	95.5 (21)	88.5 (54)	96.7 (59)
Ոչ	10.3 (4)	2.6 (1)	12.5 (1)	-	9.1 (1)	-	33.3 (1)	33.3 (1)	13.6 (3)	4.5 (1)	11.5 (7)	3.3 (2)
<b>Դռանը ցուցանակ է փակցված, թե ոչ աշխատանքային ժամերին որտեղ դիմել անհետաձգելի բուժօգնության համար</b>												
Այո	7.7 (3)	20.5 (8)	25.0 (2)	25.0 (2)	36.4 (4)	27.3 (3)	66.7 (2)	66.7 (2)	36.4 (8)	31.8 (7)	18.0 (11)	24.6 (15)
Ոչ	92.3 (36)	79.5 (31)	75.0 (6)	75.0 (6)	63.6 (7)	72.7 (8)	33.3 (1)	33.3 (1)	63.6(14)	68.2 (15)	82.0 (50)	75.4 (46)

**Աղյուսակ 3. Բուժօժանայությունների մատչելիությունը ԲՄԿ-ներում և սպասարկման մանրամասները**

	Ամիսը մեկ անգամ կամ ավելի հաճախակի		Երկու ամիսը մեկ անգամ		Երեք ամիսը մեկ անգամ		Երեք ամիսը մեկ անգամից սակավ	
	2006	2008	2006	2008	2006	2008	2006	2008
	% (n)	% (n)	% (n)	% (n)	% (n)	% (n)	% (n)	% (n)
Վերահսկող բժշկի այցելության հաճախականությունը	59.0 (23)	94.9 (37)	23.1 (9)	2.6 (1)	15.4 (6)	2.6 (1)	2.6 (1)	-
Վերահսկող բժշկի տնային այցեր կատարելու հաճախականությունը	43.6 (17)	66.7 (26)	28.2 (11)	17.9 (7)	15.4 (6)	7.7 (3)	12.8 (5)	7.7 (3)
	<b>Միշտ</b>		<b>Սովորաբար</b>		<b>Երբեմն</b>		<b>Երբեք</b>	
Վերահսկող բժշկի՝ բուժհաստատությունում հիվանդներին ընդունելու հաճախականությունը	56.4 (22)	82.1 (32)	28.2 (11)	17.9 (7)	15.4 (6)	-	-	-
Վերահսկող բժշկի՝ իր այցի ամսաթվի և ժամի մասին ԲՄԿ-ին նախազգուշացնելու հաճախականությունը	64.9 (24)	92.3 (36)	29.7 (11)	7.7 (3)	5.4 (2)	-	-	-
Գյուղապետի՝ անհետաձգելի դեպքերում համայնքի անդամներին փոխադրամիջոց տրամադրելու հաճախականությունը	25.6 (10)	38.5 (15)	20.5 (8)	15.4 (6)	38.5 (15)	33.3 (13)	15.4 (6)	12.8 (5)

**Աղյուսակ 4. Բուժժառայությունների մատչելիությունը/բուժօգնության ցուցաբերումը. միջին միավորն ըստ բուժհաստատության տեսակի և մարզի**

Բուժհաստատության տեսակը	2006	2008
	միջին (n)	միջին (n)
ԲՄԿ*	1.9 (36)	2.4 (38)
Ուղեգրման հաստատություններ (ԳԲԱ/ԱԿ/ՊԿ)*	2.3 (22)	2.6 (22)
ԳԲԱ	2.2 (8)	2.5 (8)
ԱԿ	2.3 (11)	2.6 (11)
Պոլիկլինիկա	2.5 (3)	2.7 (3)
<b>Մարզ</b>		
Լոռի*	1.8 (28)	2.4 (30)
Շիրակ*	2.2 (30)	2.6 (30)
<b>Ընդամենը *</b>	<b>2.0 (58)</b>	<b>2.5 (60)</b>

\* 2006 և 2008թթ. միջև տարբերությունը վիճակագրորեն հավաստի է,  $p < .05$

**3.2 Բուժաշխատողի փոխհարաբերությունները այցելուների և բնակչության հետ**

Հետազոտությունը ցույց է տվել, որ ԲՄԿ-ների 33.3%-ում, ԳԲԱ-ների 37.5%-ում, ԱԿ-ների 54.5%-ում և մեկ ՊԿ-ում այցելուներին միշտ կամ սովորաբար տրամադրվել են անհրաժեշտ առողջապահական նյութեր: Ընդհանրապես, այդպիսի բուժհաստատությունների թիվը 2006թ. համեմատությամբ աճել է 20-ով (51 հաստատություն՝ 2008թ., 31՝ 2006թ.): 2006թ. համեմատությամբ, 2008թ. բուժաշխատողներն ավելի հաճախ են վարել առողջապահական զրույցներ ինչպես համայնքի, այնպես էլ՝ սպասարկվողների հետ նրանց այցերի ժամանակ: Նաև՝ ավելի մեծ է եղել այն հաստատությունների թիվը, որոնց բուժաշխատողները միշտ կամ սովորաբար նախապատրաստվել են առողջապահական զրույցներին՝ ինչպես հարկն է (2008թ.՝ 23, մինչդեռ 2006թ.՝ ընդամենը 8 հաստատություն): Գյուղապետերը 2008թ. ավելի հաճախ են մասնակցել համայնքների առողջապահական խնդիրների լուծմանը, քան 2006թ. (աղյուսակ 5): Ըստ հետծրագրային հետազոտության տվյալների՝ ավելի շատ հաստատություններում է հիվանդներին ընձեռվել հնարավորություն ընտրություն կատարելու բուժման տարբեր մեթոդների միջև. 2008թ.՝ 47 բուժհաստատությունում, իսկ 2006թ.՝ 36-ում: Հաստատությունների ճնշող մեծամասնությունում (52-ում՝ 2008թ., 50-ում՝ 2006թ.) առաջարկությունների համար նախատեսված արկղիկները բացակայել են ինչպես 2008թ., այնպես էլ՝ 2006թ.: Իսկ այն բուժհաստատություններում, որտեղ դրանք եղել են, այցելուների առաջարկությունների հիման վրա հազվադեպ են փոփոխություններ կատարվել (4 հաստատությունում՝ 2008թ. և 1-ում՝ 2006թ.):

Թեև խորհրդատվության, զննումների և միջամտությունների համար նախատեսված մեկուսի սենյակ ունեցող հաստատությունների թիվը զգալիորեն աճել է 2006թ. ի վեր (70.5%՝ 2008թ., 45.9%՝ 2006թ.), հիվանդների քարտերի գաղտնիությունը ոչ բավարար չափով է ապահովվել:

2008թ. բուժհաստատությունների 67.2%-ում բուժաշխատողները վարել են գրանցումներ սպասարկվող բնակչության տարիքային և սեռային կազմի վերաբերյալ (2006թ.՝ 52.5%-ում), իսկ 42.6%-ում պահել են իրենց համայնքի հատուկ արտոնություններ և անվճար դեղորայք ստանալու իրավունք ունեցող անձանց ցուցակները (2006թ.՝ 32.8%): 2008թ. բուժհաստատությունների միայն 3.3%-ում (2 ԳԲԱ-ում) են կատարվել հիվանդների գոհունակության հարցումներ (2006թ.՝ 5.0%-ում՝ 2 ԳԲԱ-ում և 1 ԱԿ-ում):



Աղյուսակ 5. Բուժաշխատողի փոխհարաբերությունները այցելուների և բնակչության հետ

	ԲՍԿ % (n)		Ուղեգրման հաստատություններ								ԸՆԴԱՄԵՆԸ % (n)	
			Ամբուլատորիա % (n)		Առողջ. կենտրոն % (n)		Պոլիկլինիկա % (n)		Ընդամենը % (n)			
	2006	2008	2006	2008	2006	2008	2006	2008	2006	2008	2006	2008
<b>Բուժաշխատողների կողմից այցելուներին անհրաժեշտ առողջապահական նյութեր տրամադրելու հաճախականությունը</b>												
Միշտ	17.9 (7)	33.3(13)	37.5 (3)	37.5 (3)	18.2 (2)	54.5 (6)	-	50.0 (1)	23.8 (5)	47.6(10)	20.0(12)	38.3(23)
Սովորաբար	30.8(12)	53.8(21)	25.0 (2)	25.0 (2)	36.4 (4)	45.5 (5)	50.0(1)	-	33.3 (7)	33.3 (7)	31.7(19)	46.7(28)
Երբեմն	33.3(13)	7.7 (3)	12.5 (1)	37.5 (3)	45.5 (5)	-	-	-	28.6 (6)	14.3 (3)	31.7(19)	10.0 (6)
Երբեք	17.9 (7)	5.1 (2)	25.0 (2)	-	-	-	50.0(1)	50.0 (1)	14.3 (3)	4.8 (1)	16.7(10)	5.0 (3)
<b>Բուժաշխատողները կողմից այցելուների այցի ժամանակ նրանց հետ առողջապահական գրույցներ վարելու հաճախականությունը</b>												
Միշտ	46.2(18)	76.9(30)	50.0 (4)	75.0 (6)	72.7 (8)	100.0(11)	33.3(1)	100.0(3)	59.1(13)	90.9(20)	50.8(31)	82.0(50)
Սովորաբար	35.9(14)	17.9 (7)	12.5 (1)	25.0 (2)	9.1 (1)	-	66.7 (2)	-	18.2 (4)	9.1 (2)	29.5(18)	14.8 (9)
Երբեմն	12.8 (5)	5.1 (2)	37.5 (3)	-	18.2 (2)	-	-	-	22.7 (5)	-	16.4(10)	3.3 (2)
Երբեք	5.1 (2)	-	-	-	-	-	-	-	-	-	3.3 (2)	-
<b>Բուժաշխատողների կողմից համայնքի հետ առողջապահական գրույցներ վարելու հաճախականությունը</b>												
≥ ամիսը մեկ	15.4 (6)	48.7(19)	25.0 (2)	50.0 (4)	18.2 (2)	45.5 (5)	-	-	18.2 (4)	40.9 (9)	16.4(10)	45.9(28)
2-3 ամիսը մեկ	33.3(13)	38.5(15)	37.5 (3)	25.0 (2)	54.5 (6)	45.5 (5)	-	33.3 (1)	40.9 (9)	36.4 (8)	36.1(22)	37.7(23)
Տարին 1-2 անգամ	33.3(13)	7.7 (3)	12.5 (1)	12.5 (1)	18.2 (2)	9.1 (1)	33.3 (1)	33.3 (1)	18.2 (4)	13.6 (3)	27.9(17)	9.8 (6)
≤ տարին մեկ	17.9 (7)	5.1 (2)	25.0 (2)	12.5 (1)	9.1 (1)	-	66.7 (2)	33.3 (1)	22.7 (5)	9.1 (2)	19.7(12)	6.6 (4)
<b>Բուժաշխատողների կողմից առողջապահական գրույցներին՝ ինչպես հարկն է նախապատրաստվելու հաճախականությունը</b>												
Միշտ	2.6 (1)	7.7 (3)	-	12.5 (1)	9.1 (1)	18.2 (2)	-	-	4.5 (1)	13.6 (3)	3.3 (2)	9.8 (6)
Սովորաբար	7.7 (3)	28.2(11)	12.5 (1)	12.5 (1)	18.2 (2)	36.4 (4)	-	33.3 (1)	13.6 (3)	27.3 (6)	9.8 (6)	27.9(17)
Երբեմն	28.2(11)	23.1 (9)	25.0 (2)	12.5 (1)	27.3 (3)	27.3 (3)	66.7 (2)	33.3 (1)	31.8 (7)	22.7 (5)	29.5(18)	23.0(14)
Երբեք	61.5(24)	41.0(16)	62.5 (5)	62.5 (5)	45.5 (5)	18.2 (2)	33.3 (1)	33.3 (1)	50.0(11)	36.4 (8)	57.4(35)	39.3(24)
<b>Համայնքի առողջապահական խնդիրների լուծմանը գյուղապետի (համայնքապետի) մասնակցության հաճախականությունը</b>												
Միշտ	10.5 (4)	15.8 (6)	-	12.5 (1)	36.4 (4)	45.5 (5)	-	33.3 (1)	18.2 (4)	31.8 (7)	13.3 (8)	21.7(13)
Սովորաբար	23.7 (9)	36.8(14)	12.5 (1)	-	9.1 (1)	-	33.3 (1)	33.3 (1)	13.6 (3)	4.5 (1)	20.0(12)	25.0(15)
Երբեմն	39.5(15)	31.6(12)	25.0 (2)	25.0 (2)	45.5 (5)	45.5 (5)	33.3 (1)	-	36.4 (8)	31.8 (7)	38.3(23)	31.7(19)
Երբեք	26.3(10)	15.8 (6)	62.5 (5)	62.5 (5)	9.1 (1)	9.1 (1)	33.3 (1)	33.3 (1)	31.8 (7)	31.8 (7)	28.3(17)	21.7(13)

	ԲՄԿ % (n)		Ուղեգրման հաստատություններ								ԸՆԴՊԱՄԵՆԸ % (n)	
			Ամբուլատորիա % (n)		Առողջ. կենտրոն % (n)		Պոլիկլինիկա % (n)		Ընդամենը % (n)			
	2006	2008	2006	2008	2006	2008	2006	2008	2006	2008	2006	2008
<b>Բուժման տարրեր մեթոդների միջև հիվանդներին ընձեռնվող ընտրություն կատարելու հնարավորության հաճախականությունը</b>												
Միշտ	26.3(10)	36.8(14)	25.0 (2)	62.5 (5)	20.0 (2)	30.0 (3)	-	66.7 (2)	20.0 (4)	47.6(10)	23.7(14)	40.7(24)
Սովորաբար	26.3(10)	31.6(12)	50.0 (4)	37.5 (3)	60.0 (6)	70.0 (7)	66.7 (2)	33.3 (1)	60.0(12)	52.4(11)	37.3(22)	39.0(23)
Երբեմն	26.3(10)	23.7 (9)	25.0 (2)	-	10.0 (1)	-	33.3 (1)	-	20.0 (4)	-	23.7(14)	15.3 (9)
Երբեք	21.1 (8)	7.9 (3)	-	-	-	-	-	-	-	-	15.3 (9)	5.1 (3)
<b>Բուժհաստատությունում առաջարկությունների արկղիկի առկայությունը</b>												
Այո	10.3 (4)	5.1 (2)	25.0 (2)	25.0 (2)	54.5 (6)	45.5 (5)	-	-	36.4 (8)	31.8 (7)	18 (11)	14.8 (9)
Ոչ	89.7(35)	94.9(37)	75.0 (6)	75.0 (6)	45.5 (5)	54.5 (6)	100.0(3)	100.0(3)	63.6(14)	68.2(15)	82.0(50)	85.2(52)
<b>Այցելուների առաջարկների հիման վրա հաստատությունում վերջին երեք ամսվա ընթացքում կատարված փոփոխությունները</b>												
Այո	-	5.1 (2)	-	-	9.1 (1)	90.9(10)	-	33.3 (1)	4.5 (1)	50.0(11)	1.6 (1)	6.6 (4)
Ոչ	100.0(39)	94.9(37)	100.0(8)	100.0(8)	90.9(10)	9.1 (1)	100.0(3)	66.7 (2)	95.5(21)	50.0(11)	98.4(60)	93.4(57)
<b>Հիվանդների քարտերի ապահովությունը/գաղտնիությունը</b>												
Այո	15.4 (6)	15.4 (6)	-	-	9.1 (1)	9.1 (1)	-	-	4.5 (1)	4.5 (1)	11.5 (7)	11.5 (7)
Ոչ	84.6 (33)	84.6(33)	100.0(8)	100.0(8)	90.0(10)	90.9(10)	100.0(3)	100.0(3)	95.5(21)	95.5(21)	88.5(54)	88.5(54)
<b>Բուժհաստատությունում առանձին սենյակի առկայությունը խորհրդատվության, զննումների և միջամտությունների համար</b>												
Այո	23.1 (9)	56.4(22)	62.5 (5)	87.5 (7)	100.0(11)	100.0(11)	100.0(3)	100.0 (3)	86.4 (19)	95.5(21)	45.9(28)	70.5(43)
Ոչ	76.9 (30)	43.6(17)	37.5 (3)	12.5 (1)	-	-	-	-	13.6 (3)	4.5 (1)	54.1(33)	29.5(18)
<b>Բուժաշխատողները վարում են գրանցումներ սպասարկվող բնակչության տարիքային և սեռական կազմի վերաբերյալ</b>												
Այո	35.9 (14)	56.4(22)	100.0(8)	100.0(8)	63.6 (7)	72.7 (8)	100.0(3)	100.0(3)	81.8(18)	86.4(19)	52.5(32)	67.2(41)
Ոչ	64.1 (25)	43.6(17)	-	-	36.4 (4)	27.3 (3)	-	-	18.2 (4)	13.6 (3)	47.5(29)	32.8(20)
<b>Բուժաշխատողները պահում են իրենց համայնքի հատուկ արտոնություններ ունեցող անձանց ցուցակները</b>												
Այո	15.4 (6)	25.6(10)	62.5 (5)	75.0 (6)	54.5 (6)	63.6 (7)	100.0(3)	100.0(3)	63.6(14)	72.7(16)	32.8(20)	42.6(26)
Ոչ	84.6 (33)	74.4(29)	37.5 (3)	25.0 (2)	45.5 (5)	36.4 (4)	-	-	36.4 (8)	27.3 (6)	67.2(41)	57.4(35)
<b>Հաստատությունում պարբերաբար կատարվում են հիվանդների գոհունակության հարցումներ</b>												
Այո	-	-	25.0 (2)	25.0 (2)	9.1 (1)	-	-	-	13.6 (3)	9.1 (2)	5.0 (3)	3.3 (2)
Ոչ	100.0(38)	100.0(38)	75.0 (6)	75.0 (6)	90.9(10)	100.0(11)	100.0(3)	100.0(3)	86.4(19)	90.9(20)	95.0(57)	96.7(58)

Աղյուսակ 6-ում ներկայացված է այցելուների և բնակչության հետ բուժաշխատողների փոխհարաբերությունների միավորների բաշխումն ըստ բուժհաստատության տեսակի և աշխարհագրական տեղակայման 2006 և 2008 թթ. համար: Ընդհանուր առմամբ, միավորները խիստ աճել են ելակետային արժեքների համեմատությամբ (1.4՝ 2008թ.-ին, 1.1՝ 2006թ.-ին): Առողջության կենտրոնները և պոլիկլինիկաներն ունեցել են ավելի բարձր միավորներ և՛ 2006թ. (համապատասխանաբար՝ 1.6 և 1.2), և՛ 2008թ. (համապատասխանաբար՝ 1.7 և 1.7), քան ԲՄԿ-ները և ամբուլատորիաները: 2006թ. Լոռու հաստատություններն ունեցել են ավելի ցածր միավորներ, քան՝ Շիրակինը, սակայն 2008թ. երկու մարզերն ունեցել են հավասար միավորներ:

**Աղյուսակ 6. Այցելուների և բնակչության հետ բուժաշխատողի փոխհարաբերությունների միավորը՝ ըստ բուժհաստատության տեսակի և մարզի**

	2006 միջին (n)	2008 միջին (n)
<b>Բուժհաստատության տեսակը</b>		
ԲՄԿ*	0.9 (36)	1.3 (36)
Ուղեգրման հաստատություններ (ԳԲԱ/ ԱԿ/ՊԿ) *	1.4 (20)	1.7 (20)
Ամբուլատորիա	1.3 (8)	1.6 (8)
Առողջության կենտրոն	1.6 (10)	1.7 (10)
Պոլիկլինիկա	1.2 (2)	1.7 (2)
<b>Մարզ</b>		
Լոռի*	0.9 (28)	1.4 (28)
Շիրակ*	1.2 (28)	1.4 (28)
<b>Ընդամենը *</b>	1.1 (56)	1.4 (56)

\* տարբերությունը վիճակագրորեն հավաստի է,  $p < .05$

### 3.3 Միջավայր

Ինչպես երևում է աղյուսակ 7-ից, ամբուլատորիաների, առողջության կենտրոնների և պոլիկլինիկաների մեծ մասում բուժաշխատողներն ունեցել են պատվաստումների «սառցե շղթայի» պահպանման վերաբերյալ լիարժեք գրանցումներ և՛ 2006, և՛ 2008թթ., մինչդեռ 38 ԲՄԿ-ներից միայն 10-ում են եղել այդպիսի գրանցումներ 2008թ.: Ինչևէ, այս տվյալը պետք է մեկնաբանել զգուշությամբ, քանի որ, ըստ մի քանի բուժքույրերի, ԲՄԿ-ների բուժքույրերի պարտականությունների մեջ չի մտնում այդպիսի գրանցումներ վարելը. դրա համար պատասխանատու է վերահսկող ամբուլատորիան: Բուժքույրերը միայն կարճ ժամանակով՝ «փոխարինաբար», վերցնում են պատվաստումների սառցե պայուսակը՝ այն ամբուլատորիային, առողջության կենտրոնին կամ պոլիկլինիկային վերադարձնելու պայմանով:

2008թ. խիստ աճել է բավարար աշխատանքային պայմաններով բուժհաստատությունների թիվը՝ 2006թ.-ի 23.0%-ից հասնելով 75.4%-ի: Այս աճը հատկապես արտահայտված է եղել ԲՄԿ-ներում (2006թ. ի վեր աճել է 10 անգամ), որտեղ ԱԱՊԲ ծրագիրը ակտիվ աշխատել է 2006-2008թթ. ընթացքում: 2008թ. բոլոր բուժհաստատությունները, բացառությամբ մեկ ԲՄԿ-ի, աշխատանքային ժամերին կանոնավորապես օդափոխվել են, իսկ 2006թ. 11 ԲՄԿ և մեկ ամբուլատորիա չեն օդափոխվել: 2008թ. բոլոր բուժհաստատությունները կանոնավորապես մաքրվել են 2006թ.-ի 86.9%-ի համեմատությամբ:

Բուժհաստատության շենքի անվտանգության պաշտոնական ստուգումներ 2008թ. պարբերաբար կատարվել են միայն 22 բուժհաստատությունում (այս ցուցանիշը շատ քիչ նվազել է ելակետային ցուցանիշի համեմատությամբ, որը եղել է 25): 2008թ. բուժանձնակազմի համար նախատեսված անհետաձգելի իրավիճակներին պատրաստականության գործնական պարապմունքները դարձյալ հազվադեպ են իրականացվել. դրանք անց են կացվել միայն հաստատությունների 33.3%-ում: 2008թ. միայն երկու պոլիկլինիկայում և երկու ամբուլատորիայում է եղել աշխատող, որը հետևել է սարքավորումների վիճակին և վերացրել անսարքությունները: 2006թ. նման աշխատող եղել է երկու պոլիկլինիկայում և մեկ ամբուլատորիայում:

2008թ. բժշկական սարքավորումները պարբերաբար նորացվել են հետազոտված բուժհաստատությունների 78.7%-ում, իսկ 2006թ.՝ 18.0%-ում: 2008թ. բուժհաստատությունների 93.4%-ում օգտագործված ասեղները միշտ տեղադրվել են սուր գործիքների ոչնչացման համար նախատեսված տարաների մեջ: 2006թ. այդ գործելակերպը կիրառվել է բուժհաստատությունների 67.2%-ում: Այս միտումը համընդհանուր է եղել անկախ բուժհաստատության տեսակից (սուր գործիքների ոչնչացման համար նախատեսված տարաներ օգտագործել են բոլոր պոլիկլինիկաները և՛ 2006թ., և՛ 2008թ.):

Յուրաքանչյուր հիվանդի զննումից առաջ և հետո բուժաշխատողները միշտ լվացել են ձեռքերն օճառով ու ջրով միայն 19 բուժհաստատությունում 2008թ.: Չնայած որ այս ցուցանիշը խիստ աճել է ելակետային համեմատությամբ, այն դարձյալ ցածր մակարդակի վրա է: Բուժհաստատությունների 52.5%-ում բուժաշխատողները սովորաբար լվանում են ձեռքերը, իսկ 14.8%-ում լվանում են երբեմն: ԲՄԿ-ի մի բուժքույր հայտնել է, որ երբեք չի լվանում ձեռքերը հիվանդի զննումից առաջ կամ հետո: Վարակների կանխարգելման և բժշկական թափոնների վերացման վերաբերյալ սանիտարահամաճարակաբանական կանոնակարգերը 2008թ. եղել են բուժհաստատությունների 42.6%-ում, իսկ 2006թ.՝ 27.9%-ում:

Ինչպես երևում է աղյուսակ 8-ից, պոլիկլինիկաների միջավայրի գումարային միավորը եղել է ամենաբարձրը թե՛ 2006թ., թե՛ 2008թ. (համապատասխանաբար՝ 2.0 և 2.5): Ուղեգրման բուժհաստատությունների (ԳԲԱ, ԱԿ, ՊԿ) միջին միավորը 2008թ. կազմել է 2.3., իսկ ԲՄԿ-ների միջին միավորը՝ 1.7: Աշխատանքային պայմանների առումով, Շիրակի բուժհաստատությունները 2006թ. փոքր-ինչ ավելի լավ վիճակում են եղել, քան Լոռու բուժհաստատությունները: Ինչևէ, հետծրագրային գնահատման արդյունքում այս երկու մարզերի բուժհաստատությունների միջին միավորները եղել են հավասար (1.9): 2006թ. միջավայրի ընդհանուր միջին միավորը բավականին ցածր է եղել (1.3): Հետծրագրային գնահատումը ցույց է տվել, որ այն էապես աճել է՝ հասնելով 1.9-ի:

**Աղյուսակ 7. Բուժհաստատության միջավայրը**

	ԲՄԿ % (n)		Ուղեգրման հաստատություններ								ԸՆԴԱՄԵՆԸ % (n)	
			Ամբուլատորիա % (n)		Առողջ. կենտրոն % (n)		Պոլիկլինիկա % (n)		Ամբուլատորիա % (n)			
	2006	2008	2006	2008	2006	2008	2006	2008	2006	2008	2006	2008
<b>Բուժչախատողները պահպանում են պատվաստումների «սառցե շղթայի» պահպանման վերաբերյալ լիարժեք գրանցումներ</b>												
Այո	8.1 (3)	26.3 (10)	87.5 (7)	87.5 (7)	90.9 (10)	100.0 (11)	100.0 (3)	100.0 (3)	90.9 (20)	95.5 (21)	39.0 (23)	51.7 (31)
Ոչ	91.9 (34)	73.7 (28)	12.5 (1)	12.5 (1)	9.1 (1)	-	-	-	9.1 (2)	4.5 (1)	61.0 (36)	48.3 (29)
<b>Բուժհաստատությունում ստեղծված են բավարար աշխատանքային պայմաններ բուժաշխատողների համար</b>												
Այո	7.7 (3)	74.4 (29)	50.0 (4)	87.5 (7)	54.5 (6)	72.7 (8)	33.3 (1)	66.7 (2)	50.0 (11)	77.3 (17)	23.0 (14)	75.4 (46)
Ոչ	92.3 (36)	25.6 (10)	50.0 (4)	12.5 (1)	45.5 (5)	27.3 (3)	66.7 (2)	33.3 (1)	50.0 (11)	22.7 (5)	77.0 (47)	24.6 (15)
<b>Բուժհաստատությունը կանոնավոր ձևով օգտվոյվում է աշխատանքային ժամերին</b>												
Այո	71.8 (28)	97.4 (38)	87.5 (7)	100.0 (8)	100.0 (11)	100.0 (11)	100.0 (3)	100.0 (3)	95.5 (21)	100.0 (22)	80.3 (49)	98.4 (60)
Ոչ	28.2 (11)	2.6 (1)	12.5 (1)	-	-	-	-	-	4.5 (1)	-	19.7 (12)	1.6 (1)
<b>Բուժհաստատությունը կանոնավոր ձևով մաքրվում է</b>												
Այո	82.1 (32)	100.0 (39)	100.0 (8)	100.0 (8)	90.9 (10)	100.0 (11)	100.0 (3)	100.0 (3)	95.5 (21)	100.0 (22)	86.9 (53)	100.0 (61)
Ոչ	17.9 (7)	-	-	-	9.1 (1)	-	-	-	4.5 (1)	-	13.1 (8)	-
<b>Լիազորված մարմինների կողմից պարբերաբար իրականացվում է բուժհաստատության շենքի անվտանգության պաշտոնական ստուգումներ</b>												
Այո	23.7 (9)	34.2 (13)	62.5 (5)	62.5 (5)	72.7 (8)	100.0 (11)	100.0 (3)	100.0 (3)	72.7 (16)	86.4 (19)	41.7 (25)	53.3 (22)
Ոչ	76.3 (29)	65.8 (25)	37.5 (3)	37.5 (3)	27.3 (3)	-	-	-	27.3 (6)	13.6 (3)	58.3 (35)	46.7 (28)
<b>Բուժհաստատությունում պարբերաբար անցկացվում են գործնական պարապունքներ անհետաձգելի իրավիճակներին պատրաստ լինելու համար</b>												
Այո	7.7 (3)	23.1 (9)	12.5 (1)	37.5 (3)	50.0 (5)	60.0 (6)	66.7 (2)	66.7 (2)	38.1 (8)	52.4 (11)	18.3 (11)	33.3 (20)
Ոչ	92.3 (36)	76.9 (30)	87.5 (7)	62.5 (5)	50.0 (5)	40.0 (4)	33.3 (1)	33.3 (1)	61.9 (13)	47.6 (10)	81.7 (49)	66.7 (40)
<b>Բուժհաստատությունն ունի աշխատող, որը հետևում է սարքավորումների վիճակին և վերացնում անսարքությունները</b>												
Այո	-	-	12.5 (1)	25.0 (2)	-	-	100.0 (2)	100.0 (2)	14.3 (3)	19.0 (4)	5.0 (3)	6.7 (4)
Ոչ	100.0 (39)	100.0 (39)	87.5 (7)	75.0 (6)	100.0 (11)	100.0 (11)	-	-	85.7 (18)	81.0 (17)	95.0 (57)	93.3 (56)
<b>Բժշկական սարքավորումները պարբերաբար նորացվում են</b>												
Այո	7.7 (3)	76.9 (30)	25.0 (2)	75.0 (6)	45.5 (5)	81.8 (9)	33.3 (1)	100.0 (3)	36.4 (8)	81.8 (18)	18.0 (11)	78.7 (48)
Ոչ	92.3 (36)	23.1 (9)	75.0 (6)	25.0 (2)	54.5 (6)	18.2 (2)	66.7 (2)	-	63.6 (14)	18.2 (4)	82.0 (50)	21.3 (13)

*Լոռու և Շիրակի թիրախային բուժհաստատությունների կատարողականի հետժողովրդային գնահատում*

	ԲՄԿ % (n)		Ուղեգրման հաստատություններ								ԸՆԴԱՄԵՆԸ % (n)	
			Ամբուլատորիա % (n)		Առողջ. կենտրոն % (n)		Պոլիկլինիկա % (n)		Ամբուլատորիա % (n)			
	2006	2008	2006	2008	2006	2008	2006	2008	2006	2008	2006	2008
<b>Հատուկ կոնսեյնյանների մեջ օգտագործված ասեղների տեղադրման հաճախականությունը</b>												
Միշտ	61.5 (24)	92.3 (36)	75.0 (6)	87.5 (7)	72.7 (8)	100.0 (11)	100.0 (3)	100.0 (3)	77.3 (17)	95.5 (21)	67.2 (41)	93.4 (57)
Սովորա- բար	12.8 (5)	5.1 (2)	12.5 (1)	-	18.2 (2)	-	-	-	13.6 (3)	-	13.1 (8)	3.3 (2)
Երբեմն	15.4 (6)	2.6 (1)	12.5 (1)	12.5 (1)	9.1 (1)	-	-	-	9.1 (2)	4.5 (1)	13.1 (8)	3.3 (2)
Երբեք	10.3 (4)	-	-	-	-	-	-	-	-	-	6.6 (4)	-
<b>Յուրաքանչյուր հիվանդի զննումից առաջ և հետո բուժաշխատողների ձեռքերը օճառով և ջրով լվանալու հաճախականությունը</b>												
Միշտ	7.7 (3)	30.8 (12)	37.5 (3)	37.5 (3)	9.1 (1)	27.3 (3)	-	33.3 (1)	18.2 (4)	31.8 (7)	11.5 (7)	31.1 (19)
Սովորա- բար	43.6 (17)	48.7 (19)	37.5 (3)	50.0 (4)	81.8 (9)	72.7 (8)	33.3 (1)	33.3 (1)	59.1 (13)	59.1 (13)	49.2 (30)	52.5 (32)
Երբեմն	41.0 (16)	17.9 (7)	25.0 (2)	12.5 (1)	9.1 (1)	-	66.7 (2)	33.3 (1)	22.7 (5)	9.1 (2)	34.4 (21)	14.8 (9)
Երբեք	7.7 (3)	2.6 (1)	-	-	-	-	-	-	-	-	4.9 (3)	1.6 (1)
<b>Բուժհաստատությունում կան ԱՆ սանիտարահամաճարակաբանական կանոնակարգեր վարակների կանխարգելման և բժշկական թափոնների վերացման վերաբերյալ</b>												
Այո	10.3 (4)	25.6 (10)	50.0 (4)	62.5 (5)	63.6 (7)	81.8 (9)	66.7 (2)	66.7 (2)	59.1 (13)	72.7 (16)	27.9 (17)	42.6 (26)
Ոչ	89.7 (35)	74.4 (29)	50.0 (4)	37.5 (3)	36.4 (4)	18.2 (2)	33.3 (1)	33.3 (1)	40.9 (9)	27.3 (6)	72.1 (44)	57.4 (35)

**Աղյուսակ 8. Միջավայրի միջին միավորն ըստ հաստատության տեսակի և մարզի**

	2006 միջին (n)	2008 միջին (n)
<b>Բուժհաստատության տեսակը</b>		
ԲՄԿ*	1.0 (36)	1.7 (37)
Ուղեգրման բուժհաստատություններ *	1.9 (20)	2.3 (20)
<i>Ամբուլատորիա</i>	1.8 (8)	2.2 (8)
<i>Առողջության կենտրոն</i>	1.9 (10)	2.4 (10)
<i>Պոլիկլինիկա</i>	2.0 (2)	2.5 (2)
<b>Մարզ</b>		
Լոռի*	1.1 (26)	1.9 (27)
Շիրակ*	1.4 (30)	1.9 (30)
<b>Ընդամենը *</b>	<b>1.3 (56)</b>	<b>1.9 (57)</b>

\* տարբերությունը վիճակագրորեն հավաստի է,  $p < .05$

**3.4 Բուժհաստատության կառավարում**

Հարցվողներին մի շարք հարցեր են տրվել հաստատության կառավարման վերաբերյալ (աղյուսակ 9): 2008թ. բուժհաստատությունների 36.1%-ում եղել են աշխատողների աշխատանքի նկարագրություններ, մինչդեռ 2006թ.՝ 29.5%-ում: 2008թ. բոլոր ՊԿ/ԱԿ/ԳԲԱ-ները, և ԲՄԿ-ների 30.8%-ը ունեցել են քրոնիկ հիվանդություններով տառապող սպասարկվողների ցուցակները (2006թ. համեմատությամբ նկատվել է 17.2%-ի աճ): Շատ բուժհաստատություններում (85.0%՝ 2008թ., 86.7%՝ 2006թ.) չի եղել բնակչության բողոքներին արձագանքելու պաշտոնական գործընթաց:

Հարցվողների մեծ մասը (81.7%՝ 2008թ., 83.3%՝ 2006թ.) հայտնել է, որ իրենց ներկա բուժանձնակազմը բավարար է բնակչությանը բարձրորակ և օգտավետ ծառայություններով ապահովելու համար: Առաջնային բուժօգնության ընդունված կլինիկական ստանդարտներ ունեցող հաստատությունների թիվը 2008թ. խիստ աճել է՝ հասնելով 43-ի (2006թ.՝ 23): Իրենց առօրյա աշխատանքում այդ ստանդարտները կիրառել են ԲՄԿ-ների 56.8%-ը, ԳԲԱ-ների 87.5%-ը, ԱԿ-ների 90.9%-ը և բոլոր ՊԿ-ները: 61 հաստատություններից 33-ում (54.1%) բոլոր բուժաշխատողները գոհ են եղել իրենց աշխատանքից (ելակետային 32.2%-ի համեմատությամբ): Հաստատությունների մեծ մասում կազմակերպվել են ներքին քննարկումներ, սակայն դրանց գրավոր արձանագրություններ հազվադեպ են կազմվել և՛ 2006թ., և՛ 2008թ. (միայն 1 ԲՄԿ-ում, 4 ԳԲԱ-ում, 1 ԱԿ-ում և 1 ՊԿ-ում 2008թ.): Շատ բուժհաստատություններում (90.2%՝ 2006թ., 78.7%՝ 2008թ.) չի եղել աշխատողների լավ աշխատանքի նյութական խրախուսման որևէ համակարգ:

ԲՄԿ-ները պատասխանել են նաև իրենց հատուկ հարցերի (աղյուսակ 10): 2006թ. ի վեր, ԲՄԿ-ների կառավարման հետ կապված շատ ոլորտներ էապես բարելավվել են: Ըստ հարցվողների 82.1%-ի՝ 2008թ. վերահսկողներն իրենց այցերի ժամանակ ԲՄԿ-ների բուժաշխատողներին միշտ կամ սովորաբար ներգրավել են ծագող խնդիրների լուծման գործընթացում (2006թ.՝ 59.0%): 2008թ. վերահսկողը կլինիկական օժանդակություն է ցուցաբերել հետազոտված ԲՄԿ-ների 74.4%-ին, իսկ վարչական օժանդակություն՝ 53.8%-ին, այնինչ 2006թ.՝ համապատասխանաբար, 51.3%-ին և 41.0%-ին: Երբ ծագած խնդիրը հնարավոր չի եղել լուծել տեղում, ԲՄԿ-ների 61.5%-ում վերահսկողը փորձել է լուծել դրանք տեղական ղեկավար մարմինների միջոցով (2006թ.՝ 46.2%-ում): 2008թ. 39 ԲՄԿ-ից 32-ում վերահսկողը հետազայում տեղեկացրել է բուժաշխատողին տվյալ խնդրի կարգավիճակի մասին:

**Աղյուսակ 9. Բուժհաստատության կառավարում**

	ԲՄԿ % (n)		Ուղեգրման հաստատություններ								ԸՆԴՊՄԵՆԸ % (n)	
			Ամբուլատորիա % (n)		Առողջ. կենտրոն % (n)		Պոլիկլինիկա % (n)		Ընդամենը % (n)			
	2006	2008	2006	2008	2006	2008	2006	2008	2006	2008	2006	2008
<b>Բուժաշխատողներն ունեն իրենց աշխատանքի գրավոր նկարագրություն</b>												
Այո	12.8 (5)	20.5 (8)	62.5 (5)	50.0 (4)	54.5 (6)	63.6 (7)	66.7 (2)	100.0 (3)	59.1 (13)	63.6 (14)	29.5(18)	36.1(22)
Ոչ	87.2(34)	79.5 (31)	37.5 (3)	50.0 (4)	45.5 (5)	36.4 (4)	33.1 (1)	-	40.9 (9)	36.4 (8)	70.5(43)	63.9(39)
<b>Բուժհաստատությունում պահվում են քրոնիկ հիվանդություններ ունեցող սպասարկվող բնակչության ցուցակները</b>												
Այո	23.1 (9)	30.8 (12)	100.0 (8)	100.0 (8)	81.8 (9)	100.0(11)	100.0 (3)	100.0 (3)	90.9(20)	100.0(22)	47.5(29)	55.7(34)
Ոչ	76.9 (30)	69.2 (27)	-	-	18.2 (2)	-	-	-	9.1 (2)	-	52.5(32)	44.3(27)
<b>Բուժանձնակազմի ներկա քանակը բավարար է բնակչությանը բարձրորակ ծառայություններով ապահովելու համար</b>												
Այո	76.9 (30)	82.1 (32)	87.5 (7)	75.0 (6)	100.0(10)	80.0 (8)	100.0 (3)	100.0 (3)	95.2(20)	80.9 (17)	83.3(50)	81.7(49)
Ոչ	23.1 (9)	17.9 (7)	12.5 (1)	25.0 (2)	-	20.0 (2)	-	-	4.8 (1)	19.0 (4)	16.7(10)	18.3(11)
<b>Բուժհաստատությունում գոյություն ունի հիվանդների բողոքներին արձագանքելու պաշտոնական գործընթաց</b>												
Այո	5.1 (2)	5.1 (2)	28.6 (2)	28.6 (2)	27.3 (3)	27.3 (3)	33.3 (1)	66.7 (2)	28.6 (6)	33.3 (7)	13.3 (8)	15.0 (9)
Ոչ	94.9 (37)	94.9 (37)	71.4 (5)	71.4 (5)	72.7 (8)	72.7 (8)	66.7 (2)	33.3 (1)	71.4(15)	66.6 (14)	86.7(52)	85.0(51)
<b>Բուժաշխատողները կարող են տեղեկություններ ստանալ առաջնային բուժօգնության ընդունված կլինիկական ստանդարտների վերաբերյալ (կլինիկական ուղեցույցներից, կլինիկական համառոտ գործելակարգերից, և չափորոշիչներից)</b>												
Այո	23.1 (9)	61.5 (24)	50.0 (4)	87.5 (7)	72.7 (8)	81.8 (9)	66.7 (2)	100.0 (3)	63.6(14)	86.4 (19)	37.7(23)	70.5(43)
Ոչ	76.9 (30)	38.5 (15)	50.0 (4)	12.5 (1)	27.3 (3)	18.2 (2)	33.3 (1)	-	36.4 (8)	13.6 (3)	62.3(38)	29.5(18)
<b>Բուժաշխատողներն օգտագործում են այդ ստանդարտներն իրենց առօրյա աշխատանքում</b>												
Այո	27.0 (10)	56.8 (21)	62.5 (5)	87.5 (7)	81.8 (9)	90.9 (10)	66.7 (2)	100.0 (3)	72.7(16)	90.9 (20)	44.1(26)	69.5(41)
Ոչ	73.0 (27)	43.2 (16)	37.5 (3)	12.5 (1)	18.2 (2)	9.1 (1)	33.3 (1)	-	27.3 (6)	9.1 (2)	55.9(33)	30.5(18)



*Լոռու և Շիրակի թիրախային բուժհաստատությունների կատարողականի հետծրագրային գնահատում*

	ԲՄԿ % (n)		Ուղեգրման հաստատություններ								ԸՆԴԱՄԵՆԸ % (n)	
			Ամբուլատորիա % (n)		Առողջ. կենտրոն % (n)		Պոլիկլինիկա % (n)		Ընդամենը % (n)			
	2006	2008	2006	2008	2006	2008	2006	2008	2006	2008	2006	2008
<b>Բուժաշխատողները գոհ են իրենց աշխատանքից</b>												
Բոլորը	32.4 (12)	53.8 (21)	25.0 (2)	62.5 (5)	45.5 (5)	63.6 (7)	-	-	33.3 (7)	54.5 (12)	32.2(19)	54.1(33)
Ոմանք	13.5 (5)	17.9 (7)	37.5 (3)	25.0 (2)	45.5 (5)	36.4 (4)	100.0 (3)	100.0 (3)	52.4(11)	40.9 (9)	27.1(16)	26.2(16)
Ոչ	54.1 (20)	28.2 (11)	37.5 (3)	12.5 (1)	-	-	-	-	14.3 (3)	4.5 (1)	40.7(24)	19.7(12)
<b>Բուժհաստատությունը կազմակերպում է ներքին քննարկումներ իր գործունեությունը գնահատելու համար</b>												
Այո	20.5 (8)	28.2 (11)	87.5 (7)	87.5 (7)	90.9 (10)	81.8 (9)	66.7 (2)	100.0 (3)	86.4(19)	86.4 (19)	44.3(27)	49.2(30)
Ոչ	79.5 (31)	71.8 (28)	12.5 (1)	12.5 (1)	9.1 (1)	18.2 (2)	33.3 (1)	-	13.6 (3)	13.6 (3)	55.7(34)	50.8(31)
<b>Բուժհաստատությունում պահվում են այդ քննարկումների արձանագրությունները</b>												
Այո	-	2.6 (1)	37.5 (3)	50.0 (4)	27.3 (3)	9.1 (1)	66.7 (2)	33.3 (1)	36.4 (8)	27.3 (6)	13.1 (8)	11.5 (7)
Ոչ	100.0(39)	97.4 (38)	62.5 (5)	50.0 (4)	72.7 (8)	90.9 (10)	33.3 (1)	66.7 (2)	63.6(14)	72.7 (16)	86.9(53)	88.5(54)
<b>Բուժհաստատությունում գործում է բուժաշխատողի լավ աշխատանքի նյութական խրախուսման որևէ համակարգ</b>												
Այո	-	7.7 (3)	12.5 (1)	37.5 (3)	36.4 (4)	54.5 (6)	33.3 (1)	33.3 (1)	27.3 (6)	45.5 (10)	9.8 (6)	21.3(13)
Ոչ	100.0(39)	92.3 (36)	87.5 (7)	62.5 (5)	63.6 (7)	45.5 (5)	66.7 (2)	66.7 (2)	72.7(16)	54.5 (12)	90.2(55)	78.7(48)

**Աղյուսակ 10. Բուժհաստատության կառավարում ԲՄԿ-ներում**

	Միշտ % (n)		Սովորաբար % (n)		Երբեմն % (n)		Երբեք % (n)	
	2006	2008	2006	2008	2006	2008	2006	2008
Վերահսկողը ներգրավում է բուժաշխատողներին ծագող խնդիրների լուծման գործընթացում	30.8 (12)	46.2 (18)	28.2 (11)	35.9 (14)	28.2 (11)	12.8 (5)	12.8 (5)	5.1 (2)
Վերահսկողը բուժաշխատողներին ցուցաբերում է աջակցություն կլինիկական հարցերում	51.3 (20)	74.4 (29)	17.9 (7)	15.4 (6)	25.6 (10)	10.3 (4)	5.1 (2)	-
Վերահսկողը բուժաշխատողներին ցուցաբերում է վարչական աջակցություն	41.0 (16)	53.8 (21)	20.5 (8)	30.8 (12)	25.6 (10)	7.7 (3)	12.8 (5)	7.7 (3)
Եթե հարցերը հնարավոր չէ լուծել բուժհաստատությունում, վերահսկողը փորձում է դրանք լուծել տեղական մարմինների օգնությամբ	23.1 (9)	35.9 (14)	23.1 (9)	25.6 (10)	35.9 (14)	33.3 (13)	17.9 (7)	5.1 (2)
Վերահսկողը հետազայում տեղեկացնում է բուժաշխատողին տվյալ հարցի կարգավիճակի մասին	35.9 (14)	48.7 (19)	30.8 (12)	33.3 (13)	25.6 (10)	12.8 (5)	7.7 (3)	5.1 (2)

Աղյուսակ 11-ում ներկայացված են բուժհաստատության կառավարման միջին միավորներն ըստ բուժհաստատության տեսակի և մարզի: Գնահատված հաստատությունների կառավարման միջին միավորները եղել են հավաստիորեն տարբեր 2006թ. (1.4) և 2008թ. (1.7): Այդ տարբերությունն ավելի զգալի է եղել ԲՄԿ-ներում (1.1` 2006թ., 1.5` 2008թ.): Ուղեգրման հաստատություններում այդ տարբերությունը վիճակագրորեն հավաստի չի եղել (1.9` 2006թ., 2.0` 2008թ.): ՊԿ-ներում կառավարման միավորն ավելի բարձր է եղել (2.0` 2006թ., 2.4` 2008թ.), քան մնացած հաստատություններում, իսկ ԲՄԿ-ներն ունեցել են ամենացածր միավորը: Շիրակի մարզի հաստատությունները, թերևս, դեկավարման ավելի լավ մեխանիզմներ են ունեցել, քան` Լոռու մարզինը, թե՛ 2006-ին, թե՛ 2008-ին:

**Աղյուսակ 11. Բուժհաստատության կառավարում` միջին միավորը ըստ բուժհաստատության տեսակի և մարզի**

	2006 միջին (n)	2008 միջին (n)
<b>Բուժհաստատության տեսակը</b>		
ԲՄԿ*	1.1 (36)	1.5 (37)
Ուղեգրման հաստատություններ	1.9 (20)	2.0 (20)
<i>Անբուժատորիա</i>	1.7 (7)	2.0 (7)
<i>Առողջության կենտրոն</i>	1.9 (10)	2.0 (10)
<i>Պոլիկլինիկա</i>	2.0 (3)	2.4 (3)
<b>Մարզ</b>		
Լոռի*	1.1 (26)	1.4 (27)
Շիրակ*	1.6 (30)	1.9 (30)
<b>Ընդամենը *</b>	<b>1.4 (56)</b>	<b>1.7 (57)</b>

\* 2006 to 2008 տարբերությունը վիճակագրորեն հավաստի է,  $p < 0.05$

**3.5 Առաջնային և երկրորդային կանխարգելում**

Առաջնային և երկրորդային կանխարգելման վերաբերյալ տվյալները ներկայացված են աղյուսակ 12-ում: 2006թ. ի վեր կանխարգելմանն ուղղված գործունեությունն էապես բարելավվել է: 2008թ. հաստատությունների 93.2%-ում նշել են, որ 24 ամս. մանուկները լիովին պատվաստված են (ընդգրկվածությունը 75%-ից բարձր է): Մյուս, համեմատաբար տարածված միջոցառումների թվում եղել են առողջ հղիության, կրծքով սնուցման, երեխայի խնամքի, անձնական ու սեռական հիգիենայի մասին խորհրդատվությունը հղի կանանց շրջանում (հաստատությունների 84.7%-ում արվել է հղի կանանց ավելի քան 75%-ի համար), և 15-17 տարեկան դեռահաս աղջիկների հետազոտումը և վերարտադրողական առողջության վերաբերյալ խորհրդատվությունը (բուժհաստատությունների 73.0%-ում արվել է դեռահաս աղջիկների ավելի քան 75%-ի համար): Հաստատությունների 60.0%-ում 2-րդ տիպի շաքարային դիաբետով հիվանդների ավելի քան 75%-ն առնվազն ամիսը մեկ անցել է արյան մեջ շաքարի մակարդակի քննություն: Բուժհաստատությունների 57.6%-ում առաջին նախաձեռնողյան այցելությունը կատարվել է հղիության առաջին եռամսյակում հղի կանանց ավելի քան 75%-ի համար: Ամենահազվադեպ կիրառվող կանխարգելիչ միջոցառումները եղել են արյան և մեզի ընդհանուր քննությունը 12 ամսականում (հաստատությունների միայն 25.4%-ն են նշել, որ երեխաների ավելի քան 75%-ն անցնում է այն) և 20 տարեկանից բարձր բնակչության զարկերակային արյան ճնշման կանխարգելիչ չափումը առնվազն տարին մեկ անգամ` արդյունքների գրանցումով բժշկական քարտում (հաստատությունների միայն 11.7%-ն են նշել, որ սա արվում է սպասարկվողների ավելի քան 75%-ի համար):

**Աղյուսակ 12. Բուժհաստատությունների առաջնային և երկրորդային կանխարգելման միջոցառումները ըստ բնակչության խմբերի**

	Ավելի քան 75%-ը		50-75%-ը		25-50%-ը		25%-ից քիչ	
	2006	2008	2006	2008	2006	2008	2006	2008
	% (n)*	% (n)	% (n)	% (n)	% (n)	% (n)	% (n)	% (n)
24 ամսական լիովին պատվաստված մանուկները	81.4 (38)	93.2 (55)	11.9 (7)	5.1 (3)	3.4 (2)	-	3.4 (2)	1.7 (1)
Չդի կանայք, ովքեր ստացել են առողջ հղիության, կրծքով կերակրման, երեխայի խնամքի, անձնական և սեռական հիգիենայի մասին խորհրդատվություն 15-17 տարեկան դեռահաս աղջիկները, ովքեր հետազոտվել և ստացել են խորհրդատվություն վերարտադրողական առողջության վերաբերյալ	55.9 (33)	84.7 (50)	22.0 (13)	6.8 (4)	10.2 (6)	6.8 (4)	11.9 (7)	1.7 (1)
Երկրորդ տիպի շաքարախտով հիվանդները, որոնք անցել են արյան մեջ շաքարի մակարդակի զննում՝ առնվազն ամիսը մեկ անգամ	32.2 (19)	72.9 (43)	20.3 (12)	6.8 (4)	22.0 (13)	13.6 (8)	25.4 (15)	6.8 (4)
Սպասարկվող հղիները, որոնք կատարել են իրենց առաջին նախածննդյան այցելությունը հղիության առաջին եռամսյակում	16.7 (10)	60.0 (36)	23.3 (14)	6.7 (4)	18.3 (11)	13.3 (8)	41.7 (25)	20.0 (12)
Երեխաները, որոնք հանձնել են մեզի և արյան ընդհանուր քննություն 12 ամսականում	30.5 (18)	57.6 (34)	20.3 (12)	23.7 (14)	25.4 (15)	13.6 (18)	23.7 (14)	5.1 (3)
Երեխաները, որոնք հանձնել են մեզի և արյան ընդհանուր քննություն 20 ամսականում	5.1 (3)	25.4 (15)	20.3 (12)	10.2 (6)	6.8 (40)	13.6 (8)	67.8 (40)	50.8 (30)
20 տարեկանից բարձր բնակչությունը, որը ստացել է արյան ճնշման կանխարգելիչ չափում առնվազն տարին մեկ և ունի այդ չափումների արդյունքների մասին գրանցում իր բժշկական քարտում	1.7 (1)	11.7 (7)	6.7 (4)	20.0 (12)	21.7 (13)	33.3 (20)	70.0 (42)	35.0 (21)

\* ԱԱԴ բուժհաստատությունների % (n)

Ուսումնասիրությունը ներառել է նաև մի շարք հարցեր, որոնք վերաբերվում են առաջնային և երկրորդային կանխարգելման առանձնահատկություններին ամբուլատորիաներում, պոլիկլինիկաներում և առողջության կենտրոններում: Ինչպես երևում է աղյուսակ 13-ից, ըստ հարցվողների, հետազոտված բուժհաստատությունների մոտ 71.4%-ում զարկերակային գերճնշմամբ և պսակաձև անոթների հիվանդությամբ տառապողների ավելի քան 75%-ը կանոնավորապես անցնում է ԷՍԳ առնվազն տարին մեկ անգամ (2006թ. 23.8% բուժհաստատությունների համեմատությամբ): Բուժհաստատությունների 66.7%-ում մինչև 9 ամսական երեխաների 75%-ի մոտ չափվում է արյան հեմոգլոբինի մակարդակը (2006թ.-ի 33.3% բուժհաստատությունների համեմատությամբ): Բուժհաստատությունների 60.0%-ում (2006թ. 45.0%-ի համեմատությամբ) հղի կանանց ավելի քան 75.0%-ը հղիության ընթացքում հետազոտվում է առնվազն 4 անգամ: 2-րդ տիպի շաքարային դիաբետով հիվանդների ավելի քան 75.0%-ը կանոնավորապես անցնում է աչքի հատակի ստուգում բուժհաստատությունների կեսից էլ պակաս մասում (45.5%` 2008թ., 23.8%` 2006թ.): Հաստատությունների 38.1%-ում բուժաշխատողները նշել են, որ ՍԻՀ հիվանդների ավելի քան 75.0%-ն անցնում է արյան խոլեսթերինի մակարդակի քննություն առնվազն տարին մեկ անգամ` համեմատած 2006թ. 9.5%-ի հետ:

Առնվազն տարին մեկ անգամ արյան խոլեսթերինի քննություն անցնող 40 տարեկանից բարձր բնակչության մասնաբաժինը եղել է փոքր. 2008թ. միայն 4 բուժհաստատությունում են նշել, որ այս տարիքային խմբի բնակչության ավելի քան 75.0%-ի մոտ արյան խոլեսթերինի մակարդակը չափվում է առնվազն տարին մեկ անգամ (2006թ.-ի համար այդպիսի գործելակերպ նշել է միայն մեկ հաստատություն): Կրծքագեղձի զննումն ու արգանդի վզիկի բջջաբանական ՊԱՊ-թեստը իրականացվել են հազվադեպ: Միայն երկու հաստատությունում են 2008թ. համար նշել, որ 40 տարեկանից բարձր կանանց ավելի քան 75.0%-ն անցնում է կրծքագեղձի կլինիկական քննություն առնվազն տարին մեկ անգամ (2006թ.-ի համար այդպիսի գործելակերպ չի նշել և ոչ մի հաստատություն): Չորս բուժհաստատություն նշել են, որ այս քննությունն անցնում է կանանց 50-75%-ը: Բջջաբանական ՊԱՊ-թեստն էլ ավելի հազվադեպ է իրականացվել: Ընդամենը 3 բուժհաստատությունում են 2008թ. համար նշել, որ 30-60 տարեկան կանանց 50%-ից ավելին անցնում է այս թեստը:

Աղյուսակ 14-ում ներկայացված է բուժհաստատություններում առաջնային և երկրորդային կանխարգելման միջոցառումների իրականացման միջին գումարային միավորների բաշխումն ըստ բուժհաստատության տեսակի և աշխարհագրական տեղակայման 2006 և 2008թթ.: 2008թ. Լոռու մարզի բուժհաստատությունների միջին միավորը եղել է 2.1, իսկ Շիրակի մարզինը՝ 1.8: Առաջնային և երկրորդային կանխարգելման միջին միավորը նկատելիորեն աճել է 2006թ. ի վեր (1.3-ից հասնելով 1.9-ի: Այս տարբերությունը վիճակագրորեն հավաստի է): Ուղեգրման հաստատությունների համեմատությամբ, ԲՄԿ-ների միավորները եղել են ավելի բարձր:

**Աղյուսակ 13. Առաջնային և երկրորդային կանխարգելման միջոցառումները ուղեգրման բուժհաստատություններում (ամբուլատորիաներում, առողջության կենտրոններում և պոլիկլինիկաներում)**

	Ավելի քան 75%-ը		50-ից 75%-ը		25-ից 50%-ը		25%-ից քիչ	
	2006 % (n)*	2008 % (n)	2006 % (n)	2008 % (n)	2006 % (n)	2008 % (n)	2006 % (n)	2008 % (n)
Մինչև 1 տարեկան այն մանուկները, ում հենոզլոբինը չափվել է 9 ամսականում	33.3 (7)	66.7 (14)	19.0 (4)	4.8 (1)	23.8 (5)	9.5 (2)	23.8 (5)	19.0 (4)
Նախադպրոցական տարիքի այն երեխաները, ովքեր ստացել են նյարդաբանի և ակնաբույժի կանխարգելիչ զննում	38.1 (8)	61.9 (13)	14.3 (3)	4.8 (1)	9.5 (2)	4.8 (1)	38.1 (8)	28.6 (6)
40 տարեկանից բարձր այն բնակչությունը, ում արյան խուլեսթերինի մակարդակը չափվել է առնվազն տարին մեկ անգամ	4.5 (1)	18.2 (4)	9.1 (2)	13.6 (3)	9.1 (2)	13.6 (3)	77.3 (17)	54.5 (12)
40 տարեկանից բարձր այն կանայք, ովքեր անցել են կրծքագեղձի կլինիկական քննություն ամենաքիչը տարին մեկ անգամ	-	9.1 (2)	9.1 (2)	18.2 (4)	27.3 (6)	22.7 (5)	63.6 (14)	50.0 (11)
30-60 տարեկան այն կանայք, ովքեր անցել են արգանդի վզիկի բջջաբանական ՊԱՊ թեստ ամենաքիչը երեք տարին մեկ անգամ	-	4.5 (1)	4.8 (1)	9.1 (2)	9.5 (2)	13.6 (3)	85.7 (18)	72.7 (16)
Այն հղի կանայք, ովքեր հետազոտվել են ամենաքիչը չորս անգամ՝ հղիության ընթացքում	45.0 (9)	60.0 (12)	40.0 (8)	5.0 (1)	10.0 (2)	10.0 (2)	5.0 (1)	25.0 (5)
Երկրորդ տիպի շաքարախտով այն հիվանդները, ովքեր անցել են աչքի հատակի ստուգում՝ առնվազն տարին մեկ անգամ	23.8 (5)	45.5 (10)	19.0 (4)	27.3 (6)	28.6 (6)	9.1 (2)	28.6 (6)	18.2 (4)
Արյան բարձր ճնշման և պսակաձև զարկերակների հիվանդությամբ այն հիվանդները, ովքեր անցել են էՍԳ զննում՝ առնվազն տարին մեկ անգամ	23.8 (5)	71.4 (15)	33.3 (7)	14.3 (3)	33.3 (7)	9.5 (2)	9.5 (2)	4.8 (1)
Սրտի իշեմիկ հիվանդություն ունեցող այն հիվանդները, ովքեր անցել են արյան խուլեսթերինի որոշում (անալիզ) առնվազն տարին մեկ անգամ	9.5 (2)	38.1 (8)	9.5 (2)	14.3 (3)	9.5 (2)	9.5 (2)	71.4 (15)	38.1 (8)

\* ԱՄՊ բուժհաստատությունների % (քանակը)

**Աղյուսակ 14. Առաջնային և երկրորդային կանխարգելում՝ միջին միավորն ըստ բուժհաստատության տեսակի և մարզի**

	2006		2008	
	միջին միավոր (n)		միջին միավոր (n)	
<b>Բուժհաստատության տեսակը</b>				
ԲՄԿ*	1.4	(36)	2.0	(36)
Ուղեգրման հաստատություններ *	1.3	(17)	1.9	(18)
<i>Ամբուլատորիա</i>	1.1	(7)	1.7	(8)
<i>Առողջության կենտրոն</i>	1.2	(8)	1.9	(8)
<i>Պոլիկլինիկա</i>	2.1	(2)	2.8	(2)
<b>Մարզ</b>				
Լոռի*	1.2	(24)	2.1	(25)
Շիրակ*	1.4	(29)	1.8	(29)
<b>Ընդամենը *</b>	<b>1.3</b>	<b>(53)</b>	<b>1.9</b>	<b>(54)</b>

\* 2006-2008թթ. տարբերությունը վիճակագրորեն հավաստի է,  $p < 0.05$

**3.6 Կատարողականի ընդհանուր միջին միավոր**

Յուրաքանչյուր բաժնի միջին միավորների գումարը բաժանելով բաժինների ընդհանուր քանակի վրա՝ հաշվարկվել է կատարողականի ընդհանուր միջին միավորը: 2006թ. ընդհանուր միջին միավորը գտնվել է 0.6-ից 2.3 միջակայքում, իսկ 2008թ.՝ 1.0-ից 2.5 միջակայքում: Ինչպես ներկայացված է աղյուսակ 15-ում, ուղեգրման հաստատություններն այս առումով շատ ավելի բարվոք վիճակում են եղել, քան ԲՄԿ-ները: Շիրակի և Լոռու հաստատությունների կատարողականի ընդհանուր միջին միավորներն իրար մոտ են եղել (համապատասխանաբար, 1.9 և 1.8): Ինչևէ, 2006թ. համեմատությամբ բարելավվումն ավելի արտահայտված է եղել Լոռու հաստատություններում:

Հավելված 2-ը ներկայացնում է կատարողականի ընդհանուր միջին միավորը յուրաքանչյուր բուժհաստատության համար:

**Աղյուսակ 15. Կատարողականի ընդհանուր միավորը (բոլոր բաժինների) ըստ բուժհաստատության տեսակի և մարզի**

	2006		2008	
	միջին միավոր (n)		միջին միավոր (n)	
<b>Բուժհաստատության տեսակը</b>				
ԲՄԿ*	1.3	(28)	1.7	(30)
Ուղեգրման հաստատություն *	1.7	(14)	2.0	(14)
<i>Ամբուլատորիա</i>	1.6	(7)	1.9	(7)
<i>Առողջության կենտրոն</i>	1.7	(7)	2.1	(7)
<i>Պոլիկլինիկա</i>	<i>Տվյալ չկա<sup>1</sup></i>		<i>Տվյալ չկա<sup>1</sup></i>	
<b>Մարզ</b>				
Լոռի*	1.2	(17)	1.8	(19)
Շիրակ*	1.6	(25)	1.9	(25)
<b>Ընդամենը *</b>	<b>1.4</b>	<b>(42)</b>	<b>1.8</b>	<b>(42)</b>

\* 2006-2008 թթ. տարբերությունը վիճակագրորեն հավաստի է,  $p < 0.05$

<sup>1</sup> Ընտրանքում ընդգրկված են եղել միայն 3 պոլիկլինիկա: Երեքն էլ ունեին չլրացված տվյալներ, այդ իսկ պատճառով այս ցուցանիշը հնարավոր չէրավ հաշվարկել:

### 3.7 ԱԱՊ համակարգի բուժաշխատողների մասնագիտական կարողությունները

#### 3.7.1. Համայնքային բուժքույրեր

ՄԳ թիմը թիրախային բուժհաստատություններում ուսումնասիրել է նաև ԱԱՊ համակարգի բուժքույրերի մասնագիտական կարողությունները: 2008թ. կատարողականի գնահատման հարցաշարի այս բաժինը վերանայվել է ըստ Ընտանեկան բժշկության թիմի առաջարկների, ավելացրել են մի շարք հարցեր բժշկական գործիքների օգտագործման, առօրյա պրակտիկայում ընտանեկան բուժքույրերի (ԸԲՔ) հմտությունների կիրառման վերաբերյալ, ինչպես նաև ստուգաթերթեր զարկերակային ճնշման չափման և գլուկոմետրիայի դիտարկման համար:

**Գործիքների օգտագործումը.** Առյուսակ 16-ը ներկայացնում է բժշկական գործիքների օգտագործումը համայնքային բուժքույրերի կողմից (նրանց, ովքեր անցել են ԱԱՊԲ ծրագրի կողմից մշակված ԸԲՔ միօրինականցված ուսումնական ծրագիրը և ստացել են համայնքային բուժքրոջ վկայագիր): Բոլոր 30 համայնքային բուժքույրերն իրենց առօրյա պրակտիկայում կանոնավոր կերպով օգտագործել են ստեթոֆոնենդոսկոպ և տոնոմետր: Սրանք միակ գործիքներն են, որ բոլոր հարցվողները կանոնավորապես կիրառել են: Հաջորդ հաճախակի օգտագործվող գործիքը եղել է մեծահաստակների կշեռքը (89.7%), այնուհետև՝ մանկական կշեռքը (79.5%) և գլուկոմետրը (59.0%): Հարցվողների մոտավորապես 8.0%-ը հայտնել է, որ կանոնավոր կերպով օգտագործում է մեզի քննության թեստեր, իսկ 5.1%-ը՝ նշել է, որ օգտագործում է տոնոմետր՝ մանկական մանժետով: Առյուսակ 17-ի մնացած գործիքները ոչ մի բուժքրոջ կողմից կանոնավորապես չեն կիրառվել:

Ոչ մի բուժքույր երբևէ չի օգտագործել կղանքում թաքնված արյան որոշման թեստեր կամ գինեկոլոգիական հայելի իր առօրյա պրակտիկայում, չնայած որ այդ գործիքների օգտագործման վերաբերյալ նրանք վերապատրաստման դասընթաց են անցել: Հազվադեպ օգտագործվող գործիքների շարքում են պիկֆլուոմետրը, օտոսկոպը և փոքր վիրաբուժական հավաքածուն (օգտագործվել են համապատասխանաբար 2.6%, 5.1% և 17.9% բուժքույրերի կողմից):

#### Առյուսակ 16. Առօրյա աշխատանքում բժշկական գործիքների կիրառման հաճախականությունը (ընտրված ԲՄԿ-ներ)

	Այո, պարբերաբար % (n)	Այո, երբեմն % (n)	Երբեք % (n)
Ստեթոֆոնենդոսկոպ	100.0 (39)	-	-
Տոնոմետր	100.0 (39)	-	-
Կշեռք – մեծերի	89.7 (35)	2.6 (1)	7.7 (3)
Կշեռք – մանկական	79.5 (31)	2.6 (1)	17.9 (7)
Գլուկոմետր	59.0 (23)	30.8 (12)	10.3 (4)
Մեզի քննության թեստ	7.7 (3)	48.7 (19)	43.6 (17)
Տոնոմետր՝ մանկական մանժետով	5.1 (2)	15.4 (6)	79.5 (31)
Փոքր վիրաբուժական հավաքածու	-	17.9 (7)	82.1 (32)
Ականջի լվացման ներարկիչ	-	5.1 (2)	94.9 (37)
Պիկֆլուոմետր	-	2.6 (1)	97.4 (38)
Կղանքում թաքնված արյան որոշման թեստ	-	-	100.0 (39)
Գինեկոլոգիական հայելի	-	-	100.0 (39)



**Ընտանեկան բուժքույրության հմտություններ.** Համայնքային բուժքույրերը պատասխանել են իրենց առօրյա պրակտիկայում կիրառվող հմտությունների վերաբերյալ մի շարք հարցերի: Աղյուսակ 17-ը ներկայացնում է պատասխանների բաշխումն ըստ մասնագիտական հմտությունների (ըստ պատասխանների հաճախականության նվազման): Ամենից հաճախ իրականացվող տասներկու միջամտությունները եղել են զարկերակային ճնշման չափումը (100.0%), ջրազրկման կանխարգելումը (100.0%), մանկան գլխի շրջագծի չափումը (97.4%), առաջին օգնությունը ավերգիկ ռեակցիաների ժամանակ (97.4%), այրվածքների մշակումը (97.4%), ընտանիքի պլանավորման խորհրդատվությունը (94.9%), մանկան դիրքի շտկումը կրծքով կերակրման ժամանակ (94.9%), արյան մեջ գլյուկոզայի մակարդակի չափումը (92.3%), մանկան կշռումը (92.3%), մանկան պատվաստումը (92.3%), հղի կնոջ կշռումը (92.3%) և կրծքագեղձի ինքնազննման տեխնիկայի դասավանդումը (92.3%): Բուժքույրերը հեշտոցից, արգանդի վզիկից կամ միզուկից քսուկ չեն վերցրել: Միայն մեկ բուժքույր է խորխ վերցրել տուբերկուլյոզի ախտորոշման համար, երեք բուժքույր քսուկ են վերցրել բկանցքից, և վեցը իրականացրել են թոքախտով հիվանդի բուժման վերահսկում:

**Աղյուսակ 17. Բուժքույրերի հմտությունների կիրառումը առօրյա պրակտիկայում**

Հմտություններ	Երբևէ կիրառումը % (n)	Կիրառման միջին հաճախականությունը վերջին 2 շաբաթում (նվազագույն – առավելագույն)
1. Ջարկերակային ճնշման չափում	100.0 (39)	21.9 (6 - 70)
2. Ջրազրկման կանխարգելում ռեհիդրոնի միջոցով	100.0 (39)	1.0 (0 - 5)
3. Մանկան գլխի շրջագծի չափում	97.4 (38)	7.5 (0 - 20)
4. Առաջին օգնություն ավերգիկ ռեակցիաների դեպքում	97.4 (38)	1.0 (0 - 5)
5. Այրվածքների մշակում	97.4 (38)	0.5 (0 - 4)
6. Ընտանիքի պլանավորման խորհրդատվություն	94.9 (37)	2.1 (0 - 11)
7. Մանկան կրծքով կերակրման դիրքի շտկում	94.9 (37)	1.4 (0 - 7)
8. Գլյուկոզայի չափում արյան մեջ	92.3 (36)	4.1 (0 - 21)
9. Մանկան կշռում	92.3 (36)	8.4 (0 - 20)
10. Մանկան պատվաստում	92.3 (36)	7.5 (0 - 28)
11. Հղի կնոջ կշռում	92.3 (36)	1.8 (0 - 12)
12. Կրծքագեղձի ինքնազննման տեխնիկայի դասավանդում	92.3 (36)	1.6 (0 - 4)
13. Ներերակային կաթիլային ներարկում	87.2 (34)	2.4 (0 - 15)
14. Մահամերձ հիվանդի խնամքի կազմակերպում	87.2 (34)	0.6 (0 - 4)
15. Պառկելախոցերի կանխարգելում և մշակում	87.2 (34)	0.6 (0 - 4)
16. Կոտրվածքների անշարժացում	87.2 (34)	0.2 (0 - 1)
17. Շնչառության հաճախականության հաշվում	87.2 (34)	1.2 (0 - 9)
18. Մանկան հասակի չափում	79.5 (31)	8.6 (0 - 20)
19. Թոքախտի կանխարգելման խորհրդատվություն	69.2 (27)	1.3 (0 - 7)
20. Մեծահասակի սիրտ-թոքային վերակենդանացում	59.0 (23)	0
21. Մեզի ստրիպային քննություն	56.4 (22)	2.4 (0 - 12)
22. Երեխայի սիրտ-թոքային վերակենդանացում	56.4 (22)	0
23. Հղի կնոջ արգանդի հատակի բարձրության որոշում	56.4 (22)	1.5 (0 - 6)
24. Սեռավարակով, ՄԻԱՎ/ ՁԻԱՀ-ով հիվանդի խորհրդատվություն	56.4 (22)	1.4 (0 - 7)
25. Ինսուլինի ներարկում	51.3 (20)	0.7 (0 - 10)
26. Վահանագեղձի շոշափում	48.7 (19)	0.3 (0 - 2)
27. ՊԱՊ թեստի կատարման խորհրդատվություն	38.5 (15)	1.7 (0 - 5)

Հմտություններ	Երբևէ կիրառումը % (n)	Կիրառման միջին հաճախականությունը վերջին 2 շաբաթում (նվազագույն – առավելագույն)
28. Միզապարկի կաթետերիզացիա	30.8 (12)	0.3 (0 - 1)
29. Թոքախտով հիվանդի բուժման վերահսկում	15.4 (6)	0.3 (0 - 2)
30. Բկանցքից քսուկ վերցնել	7.7 (3)	0
31. Խորխ վերցնել թոքախտի ախտորոշման համար	2.6 (1)	0
32. Հեշտոցից, արգանդի վզիկից և միզուկից քսուկ վերցնել	-	-

Բուժքույրերի գործունեության գումարային միավորը այս 32 մասնագիտական հմտությունների կիրառման տոկոսն է բուժքրոջ կողմից: Գործունեության միջին միավորը եղել է 69.0% (աղյուսակ 18), ընդ որում, այն հավաստիորեն ավելի բարձր է Շիրակի բուժքույրերի շրջանում, քան Լոռու (72.5%` 64.9%-ի համեմատությամբ):

**Աղյուսակ 18. ԸԲՔ հմտությունների կիրառման միջին միավորները**

	Լոռի (n =18) % (նվազագույն- առավելագույն)	Շիրակ (n =20) % (նվազագույն- առավելագույն)	Ընդամենը (n =39) % (նվազագույն- առավելագույն)
Բուժքույրերի գործունեության միավոր *	64.9 (50-87.5)	72.5 (53.1-84.4)	69.0 (50.0-87.5)

\* Մարզերի միջև տարբերությունը վիճակագրորեն հավաստի է, p<.05:

Այս կամ այն հմտությունը չկատարելու պատճառները նույնպես ուսումնասիրվել են: Ինչպես ցույց է տալիս աղյուսակ 19-ը, որպես բուժքույրերի կողմից որևէ հմտություն չկիրառելու հիմնական պատճառ նշվել է հիվանդների պակասը (41.8%): Շատ դեպքերում (34.3%) համայնքային բուժքույրերն ըստ ընդունված կարգի ուղեգրել են հիվանդներին ավելի բարձր մակարդակի բուժհաստատություններ: Բուժքույրերի մի փոքր մասը նշել է, որ հմտությունը չկիրառելու պատճառը գիտելիքի պակասն է (12.4%) կամ համապատասխան գործիքների ու պարագաների պակասը (11.6%):

**Դիտարկում**

Համայնքնային բուժքույրերի տեխնիկական ունակությունների գնահատումը ներառում է արյան ճնշման չափման և գլյուկոսետրիայի իրականացման կարողությունը: Հարցազրուցավարները խնդրել են բուժքույրերին կատարել այս չափումները և մանրամասն հետևել են նրանց՝ այդ ընթացքում լրացնելով դիտարկման ստուգաթերթերը, որոնք ներառում են 14-ական հարց՝ յուրաքանչյուր գործողության գնահատման համար: Ստուգաթերթը գնահատում է հիվանդ-բուժաշխատող փոխհարաբերությունները, գործնական հմտությունները և գործողության ընթացքում սանիտարահիգիենիկ նորմերի պահպանումը (հավելված 1):

**Ձարկերակային ճնշման չափում**

Աղյուսակ 20-ը ներկայացնում է բուժքույրերի կատարողականն ըստ զարկերակային ճնշման չափման ընթացակարգի: Բոլոր բուժքույրերը, բացի մեկից, հարգանքով և բարյացակամությամբ ողջունել են այցելուին և նախքան

միջամտությունը սկսելը բացատրել են անելիքը: Նախքան գործողությունը սկսելը բուժքույրերի 77.0%-ը ստացել է այցելուի համաձայնությունը, իսկ 84.6%-ը այցելուին առաջարկել է 3-5 րոպե հանգիստ նստել և չխոսել: Ավելի քան կեսը լվացել է ձեռքերը և չորացրել մինչև սկսելը (61.5%): 72.0%-ը կրկնել է չափումը նաև մյուս ձեռքի վրա: Ինչևէ, 39.5%-ը ճիշտ չի գրանցել երկու բազուկների չափման արդյունքները: Մոտավորապես 70.0%-ը չի մաքրել ստեթոսկոպի թաղանթը, և 51.3%-ը չի լվացել ձեռքերը գործողությունն ավարտելուց հետո:

38 բուժքույրերից միայն 4-ն են հավաքել զարկերակային ճնշման չափման համար նախատեսված առավելագույն 14 միավորը: 3 բուժքույր հավաքել են 13 միավոր, 6-ը՝ 12, և 6-ը՝ 11: Տասնհինգ բուժքրոջ միավորներ գտնվել են 7-10 միջակայքում, իսկ չորսինը՝ 2-5 միջակայքում (աղյուսակ 21): Հաշվարկվել է նաև ամբողջ ընտրանքի և յուրաքանչյուր մարզի միջին միավորը (աղյուսակ 22): Զարկերակային ճնշման չափման միջին միավորը ողջ ընտրանքի համար կազմել է 71.8%:

### **Գլուկոմետրիա**

Ինչպես ցույց է տալիս աղյուսակ 23-ը, բոլոր բուժքույրերը հարգանքով և բարյացակամությամբ ողջունել են այցելուին և նախքան միջամտությունը սկսելը բացատրել են անելիքը: 91.0%-ը ստացել է հիվանդի համաձայնությունը: Նույնքան տոկոսը նախապատրաստել է անհրաժեշտ բուժյարագաները և գործիքները՝ նախքան գլուկոմետրիան սկսելը: Գրեթե 74.0%-ը խնդրել է հիվանդին լվանալ և չորացնել ձեռքերը, իսկ 80.0%-ը լվացել և չորացրել է իր ձեռքերը: Բուժքույրերի 69.0%-ը այցելուին տվել է հարմար նստած դիրք: 77.0%-ը տեղադրել է նոր ասեղ սկարիֆիկատորի մեջ: Բուժքույրերի 74.0%-ը ստուգել է ստրիպի պիտանիության ժամկետը, իսկ 85.7%-ը ստուգել է ստրիպի և գլուկոմետրի կողերի համապատասխանությունը և արյունը ճիշտ ներքաշել ստրիպի վրա: Դիսպլեյի տվյալը գրանցել է 77.0%-ը: 80.0%-ը հանել է ասեղը անվտանգ եղանակով և նետել հատուկ արկղի մեջ: Միայն 65.7%-ն է ստրիպը հանել անձեռոցիկով՝ նախքան բժշկական թափոնների արկղի մեջ գցելը, և հետո լվացել ձեռքերը: Հինգ հոգի հավաքել են առավելագույն 14 միավորը, 8 հոգի՝ 13, 5 հոգի՝ 12, և 6 հոգի՝ 11 միավոր: 9 հոգի հավաքել է 7-10 միավոր (աղյուսակ 21): Աղյուսակ 22-ը ներկայացնում է միջին միավորներն ըստ մարզերի: Գլուկոմետրիայի ընդհանուր միջին միավորը կազմել է 81.4% (աղյուսակ 22): Գլուկոմետրիայի դիտարկման ընդհանուր միավորն ավելի բարձր է, քան՝ զարկերակային ճնշման չափման դիտարկման ընդհանուր միավորը: Երկու միջամտությունների ժամանակ էլ Լոռու բուժքույրերը հավաքել են հավաստիորեն ավելի բարձր միավոր, քան՝ Շիրակի բուժքույրերը:

**Աղյուսակ 19. Ընտանեկան բուժքույրերի պատճառները՝ հմտությունները չկիրառելու**

	Հիվանդի ուղեգրում այլ բուժիմնարկ % (n)	Թերի գիտելիքներ % (n)	Սարքավորումների ու պարագաների պակաս % (n)	Նման հիվանդ չի եղել % (n)	N
1. Մանկան գլխի շրջագծի չափում	-	-	-	100.0 (1)	1
2. Առաջին օգնություն ավերգիկ ռեակցիաների դեպքում	-	-	-	100.0 (1)	1
3. Այրվածքների նշակում	100.0 (1)	-	-	-	1
4. Ընտանիքի պլանավորման խորհրդատվություն	50.0 (1)	-	-	50.0 (1)	2
5. Մանկան կրծքով կերակրման դիրքի շտկում	100.0 (1)	-	-	-	1
6. Գլյուկոզայի չափում արյան մեջ	-	33.3 (1)	66.7 (2)	-	3
7. Մանկան կշռում	-	8. -	66.7 (2)	33.3 (1)	3
8. Մանկան պատվաստում	-	-	66.7 (2)	33.3 (1)	3
9. Հղի կնոջ կշռում	-	-	33.3 (1)	66.7 (2)	3
10. Կրծքագեղձի ինքնազննման տեխնիկայի դասավանդում	66.7 (2)	33.3 (1)	-	-	3
11. Ներերակային կաթիլային ներարկում	20.0 (1)	-	-	80.0 (4)	5
12. Սահամերձ հիվանդի խնամքի կազմակերպում	20.0 (1)	-	-	80.0 (4)	5
13. Պառկելախոցերի կանխարգելում և նշակում	-	-	-	100.0 (5)	5
14. Կոտրվածքների անշարժացում	-	-	20.0 (1)	80.0 (4)	5
15. Շնչառության հաճախականության հաշվում	20.0 (1)	60.0 (3)	-	20.0 (1)	5
16. Մանկան հասակի չափում	-	-	87.5 (7)	12.5 (1)	8
17. Թոքախտի կանխարգելման խորհրդատվություն	-	8.3 (1)	-	91.7 (11)	12
18. Մեծահասակի սիրտ-թոքային վերակենդանացում	17.6 (3)	-	-	82.4 (14)	17
19. Մեզի ստրիպային քննություն	52.9 (9)	23.5 (6)	11.8 (2)	11.8 (2)	19
20. Երեխայի սիրտ-թոքային վերակենդանացում	17.6 (3)	-	-	82.4 (14)	17
21. Հղի կնոջ արգանդի հատակի բարձրության որոշում	41.2 (7)	17.6 (3)	-	41.2 (7)	17
22. Սեռավարակով, ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ով հիվանդի խորհրդատվ.	-	5.9 (1)	94.1 (16)	-	17
23. Ինսուլինի ներարկում	5.3 (1)	5.3 (1)	-	89.5 (17)	19
24. Վահանագեղձի շոշափում	20.0 (4)	60.0 (12)	-	20.0 (4)	20
25. ՊԱՊ թեստի կատարման խորհրդատվություն	45.8 (11)	41.7 (10)	4.2 (1)	8.3 (2)	24
26. Միզապարկի կաթետերիզացիա	17.9 (5)	10.7 (3)	14.3 (4)	57.1 (16)	28
27. Թոքախտով հիվանդի բուժման վերահսկում	28.1 (9)	-	-	71.9 (23)	32
28. Բկանցքից քսուկ վերցնել	77.8 (28)	5.6 (2)	8.3 (3)	8.3 (3)	36
29. Խորիս վերցնել թոքախտի ախտորոշման համար	43.2 (16)	-	-	56.8 (21)	37
30. Հեշտոցից, արգանդի վզիկից և միզուկից քսուկ վերցնել	74.4 (29)	10.3 (4)	10.3 (4)	5.1 (2)	39
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>34.3(133)</b>	<b>12.4 (48)</b>	<b>11.6 (45)</b>	<b>41.8 (162)</b>	<b>388</b>

**Աղյուսակ 20. Համայնքային բուժքույրեր, զարկերակային ճնշման չափման դիտարկման ստուգաթերթ**

<b>Ընթացակարգ</b>	<b>% (n)</b>
1. Հարգանքով և բարյացակամությամբ ողջունեց այցելուին, բացատրեց անելիքը	97.4 (38)
2. Ստացավ այցելուի համաձայնությունը:	76.9 (30)
3. Առաջարկեց այցելուին հանգիստ նստել 3-5 րոպե և չխոսել:	84.6 (33)
4. Լվաց և չորացրեց ձեռքերը	61.5 (24)
5. Այցելուին տվեց հարմար դիրք՝ նստած մեջքը ուղիղ, առանց խաչելու ոտքերը և ծնկները, թևը դրված սեղանի վրա և բարձրացրած սրտի մակարդակին:	69.2 (27)
6. Մանժետն ամրացրեց այցելուի մերկացրած բազուկին՝ արմնկային ծալքից 2-3սմ վեր, այնպես, որ մանժետի ռետինե պարկիկի միջին հատվածը լինի բազկի ներքին մակերեսի վրա, մանժետի և թևի միջև մեկ մատ արանք մնա, և հագուստը չսեղմի թևը մանժետից վեր:	87.2 (34)
7. Շոշափեց բազկային զարկերակը արմնկափոսի շրջանում, որպեսզի ճիշտ տեղադրի ստեթոսկոպը:	84.6 (33)
8. Մանժետի մեջ արագորեն օդ մղեց՝ միաժամանակ շոշափելով անոթազարկը ճաճանչային կամ բազկային զարկերակի վրա (որպեսզի շարունակի օդ մղել մինչև մանժետի ճնշումը լինի 30 մմ սս.-ով ավելի այն մակարդակից, երբ վերանում է անոթազարկը):	69.2 (27)
9. Ստեթոսկոպի թաղանթը տեղադրեց բազկային զարկերակի վրա այնպես, որ այն չդիպչի մանժետին կամ խողովակներին:	66.7 (26)
10. Մանժետը թուլացրեց բավականաչափ դանդաղորեն (2-3 մմ սս. վրկում), որպեսզի ստեթոսկոպով որսա բազկային զարկերակի տոների ի հայտ գալու և անհետանալու պահերը	94.9 (37)
11. Արյան ճնշման չափումը կրկնեց մյուս ձեռքի վրա:	71.8 (28)
12. Գրանցեց ստացված արդյունքներից ավելի բարձրը (եթե տարբերությունը երկու թևերի վրա 10 մմ սս.-ից ավելի էր, գրանցեց երկու արդյունքն էլ՝ նշելով, թե որ թևի վրա):	60.5 (23)
13. Ստեթոսկոպի թաղանթը մաքրեց սպիրտով թրջված խժուժով:	30.8 (12)
14. Լվաց ձեռքերը:	48.7 (19)

**Աղյուսակ 21. Միջամտությունների միավորների բաշխումը, զարկերակային ճնշման չափում և գլյուկոմետրիա**

<b>Ընդհանուր միավորը (առավելագույնը=14)</b>	<b>Չարկերակային ճնշման չափում % (n)</b>	<b>Գլյուկոմետրիա % (n)</b>
2	2.6 (1)	-
4	5.3 (2)	-
5	2.6 (1)	-
7	5.3 (2)	3.0 (1)
8	2.6 (1)	12.1 (4)
9	21.1 (8)	9.1 (3)
10	10.5 (4)	3.0 (1)
11	15.8 (6)	18.2 (6)
12	15.8 (6)	15.2 (5)
13	7.9 (3)	24.2 (8)
14	10.5 (4)	15.2 (5)
<b>Ընդամենը</b>	<b>100.0 (38)</b>	<b>100.0 (33)</b>

**Աղյուսակ 22. Միջամտությունների միջին միավոր, զարկերակային ճնշման չափում և գլուկոմետրիա ըստ մարզերի**

	Լոռի, միջին միավոր (միջակայք)	Շիրակ, միջին միավոր (միջակայք)	Ընդամենը միջին միավոր (միջակայք)
Զարկերակային ճնշման չափման միջին միավոր*	79.8 (28.1-100)	65.3 (14.3-100)	71.8 (14.3-100)
Գլուկոմետրիայի միջին միավոր*	85.7 (57.0-100)	76.8 (50.0-100)	81.4 (50.0-100)

\* մարզերի միջև տարբերությունը վիճակագրորեն հավաստի է, p<0.05

**Աղյուսակ 23. Համայնքային բուժքույրերի գլուկոմետրիայի դիտարկման ստուգաթերթ**

Ընթացակարգ	% (n)
1. Հարգանքով և բարյացակամությամբ ողջունեց այցելուին, բացատրեց անելիքը:	100.0 (35)
2. Ստացավ այցելուի համաձայնությունը:	91.4 (32)
3. Նախապատրաստեց անհրաժեշտ բուժօգնությունները և գործիքները՝ գլուկոմետր, սկարիֆիկատոր իր ասեղներով, ստրիպ, բամբակե խճուճ, անձեռոցիկ:	91.2 (31)
4. Խնդրեց այցելուին լվանալ ձեռքերը և չորացնել:	74.3 (26)
5. Լվաց և չորացրեց ձեռքերը:	80.0 (28)
6. Այցելուին տվեց հարմար նստած դիրք:	79.4 (27)
7. Տեղադրեց նոր ասեղ սկարիֆիկատորի մեջ:	77.1 (27)
8. Ստուգեց ստրիպի պիտանիության ժամկետը:	74.3 (26)
9. Ստուգեց ստրիպի և գլուկոմետրի կողերի համապատասխանությունը (անհամապատասխանության դեպքում փոխեց գլուկոմետրի կողը):	85.7 (30)
10. Արյունը ճիշտ ներքաշեց ստրիպի վրա:	85.7 (30)
11. Գրանցեց դիսպլեյի տվյալը:	77.1 (27)
12. Հանեց ստրիպը անձեռոցիկով և թափեց հատուկ արկղի մեջ:	65.7 (23)
13. Հանեց ասեղը անվտանգ եղանակով (ծայրը գնդիկով ծածկած) և թափեց հատուկ արկղի մեջ:	80.0 (28)
14. Լվաց ձեռքերը:	65.7 (23)

**3.7.2. Ամբուլատորիաների, առողջության կենտրոնների և պոլիկլինիկաների բժիշկներ**

Բժիշկներին նույնպես տրվել են իրենց մասնագիտական հմտությունների և գործիքների օգտագործման վերաբերյալ հարցեր: Աղյուսակ 24-ը ներկայացնում է ամբուլատորիաների, առողջության կենտրոնների և պոլիկլինիկաների բժիշկների կողմից առավել հաճախ կիրառվող գործիքների օգտագործման հաճախականությունը: Բոլոր 42 բժիշկները կանոնավոր կերպով օգտագործել են ստեթոֆոնենդոսկոպ իրենց առօրյա պրակտիկայում: Բժիշկների մոտավորապես 92.9%-ը կանոնավորապես օգտագործել է տոնոմետր և 90.2%-ը օգտագործել է մեծահասակների կշեռք: Կանոնավորապես օգտագործվող գործիքների շարքում են եղել մանկական կշեռքը (62.5%) և ԷՍԳ սարքը (40.5%): Մնացած գործիքներն օգտագործել են հարցված բժիշկների 40.0%-ից պակաս մասը: Ամենահազվադեպ օգտագործվող գործիքների թվում է գինեկոլոգիական հայելին և կղանքում թաքնված արյան առկայության որոշման թեստը (որևէ բժիշկ կանոնավոր կերպով չի օգտագործել), այնուհետև՝ կամերտոնը (կանոնավորապես օգտագործել են

երկու բժիշկ) և մանրադիտակը (4 բժիշկ): Աղյուսակ 25-ը ներկայացնում է պատասխանների բաշխումն ըստ բժիշկների մասնագիտության (ընտանեկան բժիշկ, թերապևտ և մանկաբույժ):

**Ընտանեկան բժշկության հմտություններ**

Ամբուլատորիաների, առողջության կենտրոնների և պոլիկլինիկաների բժիշկները պատասխանել են իրենց ամենօրյա պրակտիկայի ընթացքում կատարվող միջամտությունների համար անհրաժեշտ հմտությունների վերաբերյալ մի շարք հարցերի: Աղյուսակ 26-ը ներկայացնում է պատասխանների բաշխումը ըստ բժշկի մասնագիտության (ըստ հաճախականության նվազման): Բոլոր բուժաշխատողները մատուցել են առողջ ապրելակերպի վերաբերյալ խորհրդատվություն (100.0%): Բժիշկների 95.0%-ը նշանակել է կրծքավանդակի ռենտգեն հետազոտություն տուբերկուլյոզի ռիսկի խմբում գտնվող հիվանդներին: Մոտավորապես 86.0%-ը բուժել է ռադիկուլիտով հիվանդների, նույն մասնաբաժնով բժիշկներ նշանակել են ասպիրին պսակաձև զարկերակների հիվանդությամբ հիվանդներին: Բժիշկներից շատերը (78.6%) գնահատել են պսակաձև զարկերակների հիվանդության ռիսկը սպասարկվող բնակչության շրջանում և բուժել մաշկի սնկային ախտահարումով հիվանդների: 70.0%-ը հայտնել է, որ իրեն վստահ է զգում անաֆիլակտիկ շոկի բուժում կատարելիս: 69.0%-ը հայտնել է, որ նշանակում է ֆիզիկական վարժություններ պսակաձև զարկերակների հիվանդության կանխարգելման համար, 64.3%-ը նշանակում է ֆիզիկական վարժություններ ոսկրամկանային համակարգի ախտահարումների կանխարգելման համար, 66.7%-ը գնահատում է տեսողության սրությունը: Բժիշկների 54.0%-ն իրեն վստահ է զգում սիրտ-թոքային վերակենդանացում կատարելիս, 52.4%-ը բուժում է ակնեով հիվանդների: Բժիշկների 50.0%-ից պակաս մասը կատարում է աղյուսակ 26-ում ներկայացված մնացած միջամտությունները:

Միջամտությունների գումարային միավորն իրենից ներկայացնում է բժիշկների կողմից կատարվող այս 20 միջամտությունների տոկոսը: Աղյուսակ 27-ը ներկայացնում է միջին գումարային միավորի բաշխումը, յուրաքանչյուր բժշկի տոկոսային միավորը և միավորների բաշխումն ըստ մարզերի ու բժշկական մասնագիտության: Ընդհանուր միջին միավորը կազմում է 59.6%: Շիրակի բուժաշխատողները հիմնականում կիրառում են նույն թվով հմտություններ, ինչ-որ Լոռու իրենց գործընկերները (59.1%` 60.0%-ի համեմատությամբ): Միջինում ընտանեկան բժիշկները հավաստիորեն ավելի շատ հմտություններ են կիրառում, քան` մնացած մասնագետները (թերապևտները և մանկաբույժները):

**Աղյուսակ 24. Առօրյա պրակտիկայում բժշկական գործիքների կիրառումը ԳԲԱ-ների, ԱԿ-ների, պոլիկլինիկաների բժիշկների կողմից**

<b>Գործիքներ</b>	<b>Պարբերաբար % (n)</b>	<b>Երբեմն % (n)</b>	<b>Երբեք % (n)</b>
Ստեթոֆոնենդոսկոպ	100.0 (42)	-	-
Տոնոմետր	92.9 (39)	7.1 (3)	-
Մեծերի կշեռք	90.2 (37)	4.9 (2)	4.9 (2)
Մանկական կշեռք	62.5 (25)	12.5 (5)	25.0 (10)
ԷՍԳ-ի սարք	40.5 (17)	14.3 (6)	45.2 (19)
Օտոսկոպ	38.1 (16)	26.2 (11)	35.7 (15)
Գլյուկոմետր	35.7 (15)	19.0 (8)	45.2 (19)
Ականջի լվացման ներարկիչ	31.0 (13)	16.7 (7)	52.4 (22)

Գործիքներ	Պարբերաբար % (n)	Երբեմն % (n)	Երբեք % (n)
Մեզի քննության թեստ	31.0 (13)	2.4 (1)	66.7 (28)
Տոնոմետր՝ մանկական մանժետով	28.6 (12)	26.2 (11)	45.2 (19)
Նյարդաբանական մուրճիկ	26.2 (11)	28.6 (12)	45.2 (19)
Օֆթալմոսկոպ	22.0 (9)	34.1 (14)	43.9 (18)
Փոքր վիրաբուժական հավաքածու	22.0 (9)	17.1 (7)	61.0 (25)
Պիկֆլյուոմետր	11.9 (5)	11.9 (5)	76.2 (32)
Սանրադիտակ	9.5 (4)	4.8 (2)	85.7 (36)
Կամերտոն	4.8 (2)	11.9 (5)	83.3 (35)
Կղնաքում թաքնված արյան թեստ	-	9.5 (4)	90.5 (38)
Գինեկոլոգիական հայելի	-	21.4 (9)	78.6 (33)

**Աղյուսակ 25. Առօրյա պրակտիկայում բժշկական գործիքների կիրառումը ԳԲԱ-ների, ԱԿ-ների, պոլիկլինիկաների բժիշկների կողմից՝ ըստ մասնագիտությունների**

Գործիքներ	Ընդամենական բժիշկ (n=24)	Թերապևտ (n=12)	Մանկա- բույժ (n=6)
Ստեթոֆոնենդոսկոպ	100.0 (24)	100.0 (12)	100.0 (6)
Տոնոմետր	100.0 (24)	100.0 (12)	100.0 (6)
Մեծերի կշեռք	100.0 (24)	83.3 (10)	100.0 (5)
Մանկական կշեռք	87.5 (21)	36.4 (4)	100.0 (5)
Օտոսկոպ	83.3 (20)	41.7 (5)	33.3 (2)
Գլյուկոմետր	79.2 (19)	25.0 (3)	16.7 (1)
Օֆթալմոսկոպ	78.3 (18)	33.3 (4)	16.7 (1)
ԷՍԳ-ի սարք	75.0 (18)	33.3 (4)	16.7 (1)
Նյարդաբանական մուրճիկ	75.0 (18)	41.7 (5)	-
Ականջի լվացման ներարկիչ	70.8 (17)	25.0 (3)	-
Տոնոմետր՝ մանկական մանժետով	62.5 (15)	25.0 (3)	83.3 (5)
Փոքր վիրաբուժական հավաքածու	62.5 (15)	8.3 (1)	-
Մեզի քննության թեստ	50.0 (12)	16.7 (2)	-
Պիկֆլյուոմետր	37.5 (9)	8.3 (1)	-
Գինեկոլոգիական հայելի	37.5 (9)	-	-
Սանրադիտակ	25.0 (6)	-	-
Կամերտոն	25.0 (6)	-	16.7 (1)
Կղնաքում թաքնված արյան թեստ	16.7 (4)	-	-

**Աղյուսակ 26. Առօրյա պրակտիկայում հմտությունների և միջամտությունների կիրառումը ԳԲԱ, ԱԿ, ՊԿ-ների բժիշկների կողմից՝ ըստ մասնագիտությունների**

	Ընդամենը	ԸԲ (n =24)	Թերապևտ (n =12)	Մանկա- բույժ (n=6)
Մատուցում էք առողջ ապրելակերպի վերաբերյալ խորհրդատվություն	100.0 (41)	100.0 (24)	100.0 (11)	100.0 (6)
Նշանակում էք կրծքավանդակի ռենտգեն հետազոտություն	95.1 (39)	91.7 (22)	100.0 (11)	100.0 (6)
տուբերկուլյոզի ռիսկի խմբում գտնվող հիվանդներին				
Բուժում էք ռադիկուլիտով հիվանդների	85.7 (36)	100.0 (24)	75.0 (9)	50.0 (3)
Նշանակում էք ասպիրին պսակաձև զարկերակների հիվանդությամբ հիվանդներին	85.4 (35)	95.8 (23)	90.9 (10)	33.3 (2)



	Ընդամենը	ԸԲ (n =24)	Թերապևտ (n =12)	Մանկա- բույժ (n=6)
Գնահատում էք պսակաձև զարկերակ- ների հիվանդության ռիսկը սպասարկվող բնակչության շրջանում:	78.6 (33)	87.5 (21)	91.7 (11)	16.7 (1)
Բուժում էք մաշկի սնկային ախտահարումով հիվանդների	73.8 (31)	79.2 (19)	75.0 (9)	50.0 (3)
Ձեզ վստահ եք զգում անաֆիլակտիկ շոկի բուժում կատարելիս	70.7 (29)	70.8 (17)	72.7 (8)	66.7 (4)
Նշանակում եք ֆիզիկական վարժու- թյուններ պսակաձև զարկերակների հիվանդության կանխարգելման համար	69.0 (29)	79.2 (19)	58.3 (7)	50.0 (3)
Գնահատում եք տեսողության սրությունը	66.7 (28)	79.2 (19)	33.3 (4)	83.3 (5)
Նշանակում եք ֆիզիկական վարժու- թյուններ ոսկրամկանային ախտահա- րումների կանխարգելման համար	64.3 (27)	75.0 (18)	50.0 (6)	50.0 (3)
Իրականացնում եք միջին ականջի բորբոքումով հիվանդների բուժում	57.1 (24)	75.0 (18)	16.7 (2)	66.7 (4)
Ձեզ վստահ եք զգում սիրտ-թոքային վերակենդանացում կատարելիս	53.7 (22)	54.2 (13)	63.6 (7)	33.3 (2)
Բուժում եք ակնեով հիվանդների	52.4 (22)	62.5 (15)	50.0 (6)	16.7 (1)
Ձեզ վստահ եք զգում ծանր վնասվածքների բուժում կատարելիս	48.8 (20)	62.5 (15)	27.3 (3)	33.3 (2)
Նշանակում եք հակաբեղմնավորիչներ և տրամադրում եք խորհրդատվություն ԸՊ մեթոդների վերաբերյալ	42.9 (18)	58.3 (14)	25.0 (3)	16.7 (1)
Հեռացնում եք ականջի խցանը	52.4 (22)	75.0 (18)	33.3 (4)	-
Կարում և մշակում եք վերքերը	47.6 (20)	66.7 (16)	33.3 (4)	-
Կատարում եք մեզի էքսպրես քննություն (սթրիպներով)	39.0 (16)	58.3 (14)	18.2 (2)	-
Կատարում եք ներաճած եղունգի հեռացում	14.3 (6)	25.0 (6)	-	-
Վերցնում եք արգանդի վզիկի քերուկ	-	-	-	-
ՊԱՊ հետազոտության համար:				

**Աղյուսակ 27. Աշխատանքային հմտությունների միջին միավորը՝ ըստ մարզերի և մասնագիտությունների**

	միջին միավոր (%)
<b>Մասնագիտություն*</b>	
Ընտանեկան բժիշկ	69.8
Թերապևտ	49.1
Մանկաբույժ	38.3
<b>Մարզ</b>	
Լոռի	60.0
Շիրակ	59.1
<b>Ընդամենը</b>	<b>59.6</b>

\* տարբերությունը վիճակագրորեն հավաստի է, p<0.05

### 3.8 Հիմնական արդյունքներ

Բուժհաստատության/բուժաշխատողների կատարողականի գնահատման հետազոտության հիմնական արդյունքներն են.

- **Հարցաշարի փոփոխման արդյունքում կատարված հետհայաց ելակետային գնահատումը չի առաջացրել տվյալների հավաստիության հետ կապված խնդիրներ:** 1-ին գոտու հետհայաց ելակետային տվյալները համընկնում են 2-րդ գոտու ընթացիկ ելակետային գնահատման տվյալների հետ: Այս համեմատությունը վկայում է, որ հարցաշարի չնախատեսված փոփոխման արդյունքում տվյալների հավաստիությունն էապես չի տուժել:
- **Բուժհաստատությունները բարելավվում են բուժօգնության մատչելիության և համայնքի ներգրավման տեսակետից:** Բուժօգնության մատչելիության/ծառայությունների տրամադրման միավորը 2006թ. 2.0-ից 2008թ. դարձել է 2.5: Սպասարկվողների հետ բուժաշխատողների փոխհարաբերությունների միավորը 1.1-ից դարձել է 1.4: Միջավայրի միավորը 1.3-ից դարձել է 1.9: Բուժհաստատության կառավարման միավորը 1.4-ից դարձել է 1.7: Առաջնային և երկրորդային կանխարգելման միավորը 1.3-ից դարձել է 1.9: Ընդհանուր միջին միավորը հավաստիորեն աճել է՝ 1.4-ից դառնալով 1.8:
  - *Շիրակի բուժհաստատություններն ավելի բարձր միավորներ են հավաքել, քան Լոռու բուժհաստատությունները:* Շիրակի մարզի բուժհաստատությունները ավելի բարձր ընդհանուր միջին միավոր են հավաքել, քան՝ Լոռու բուժհաստատությունները: Ինչևէ, ելակետային համեմատությամբ ավելի մեծ աճ է նկատվել Լոռու մարզի բուժհաստատություններում (Լոռու հաստատությունների ընդհանուր միջին միավորը 2006թ. կազմել է 1.2, իսկ 2008թ.՝ 1.8: Շիրակի համար այդ միավորները համապատասխանաբար կազմել են 1.6 և 1.9):
  - *ԲՄԿ-ները, ըստ իրենց միավորների, զիջում են մնացած բուժհաստատություններին:* ԲՄԿ-ների միավորները համեմատաբար ցածր են եղել և՛ ելակետային, և՛ հետծրագրային գնահատման ժամանակ: Այնուամենայնիվ, բարելավումը ԲՄԿ-ներում (տոկոսային փոփոխությունը) չի տարբերվում մնացած հաստատությունների բարելավումից:
- **Շիրակի բուժքույրերն ավելի մեծ թվով հմտություններ են կիրառել, քան՝ Լոռու բուժքույրերը:** Այս առումով երկու մարզերի բժիշկները չեն տարբերվել: Համայնքային բուժքույրերը կատարում են ԱԱՊ ընտրված հմտությունների 69.0%-ը: Շիրակի բուժքույրերի միջին միավորը հավաստիորեն ավելի բարձր է, քան՝ Լոռու բուժքույրերինը: Ամբուլատորիաների, առողջության կենտրոնների և պոլիկլինիկաների բժիշկները կատարել են ԱԱՊ ընտրված հմտությունների 59.6%-ը:
- **Լոռու բուժքույրերն ավելի ճշգրտորեն են հետևել հանձնարարվող ընթացակարգերին, քան՝ Շիրակի նրանց գործընկերները:** Համայնքային բուժքույրերը զարկերակային ճնշման չափման դիտարկման ժամանակ միջինում ճիշտ են կատարել 14 կետերի 72.1%-ը, իսկ գլուկոմետրիայի դիտարկման ժամանակ՝ 14 կետերի 81.4%-ը: Երկու միջամտությունների

դիտարկման ժամանակ էլ Լոռու բուժքույրերն իրենց հավաստիորեն ավելի լավ են դրսևորել:

- **Ընտանեկան բժիշկներն ավելի շատ հմտություններ են կանոնավորապես կիրառում, քան՝ մյուս մասնագետները (թերապևտներ և մանկաբույժներ):**  
Ընտանեկան բժիշկները կիրառում են ընտրված հմտությունների 69.8%-ը, թերապևտները՝ 49.1%,-ը իսկ մանկաբույժները՝ 38.3%-ը:

# Հավելված 1. Բուժհաստատության և բուժաշխատողների կատարողականի գնահատման հարցաթերթիկ

ԱԱՊԲ հետծրագրային գնահատում

Հարգելի գործընկերներ,

